

Ն.Ս. Ֆրանցիսկոսի հրամանագրով հռոմեական գլխավոր օրացույցում փետրվարի 27-ը կնշվի որպես Տիեզերական եկեղեցու վարդապետ Սուրբ Գրիգոր Նարեկացու հիշատակի օր: Այն կներառվի աշխարհով մեկ սփռված կաթողիկոսական եկեղեցիների տոնացույցերում, կնորացվեն պատարագի գրքերը և ժամերգության տեքստերը: Ինչպես հայտնի է, դեռևս 2015թ. փետրվարի 23-ին Հռոմի Պապը հայ միջնադարյան հոգևորական, աստվածաբան, բանաստեղծ Սուրբ Գրիգոր Նարեկացուն շնորհել էր «Տիեզերական եկեղեցու վարդապետ» տիտղոսը: Ֆրանցիսկոս Պապն այդպիսով հաստատել է Սուրբ Աթոռի Սրբերի հարցերով միաբանության ընդունած որոշումը, ըստ որի Նարեկացին արժանի էր ճանաչվել եկեղեցական մեծագույն պարգևին:

Երեքշաբթի
11 հունվարի 2022թ.
№ 1 (567)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆԻՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՔ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
ԳԻՆԸ՝ 200 ՂՐԱՍ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru



Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am



Անընդունելի է միջազգային կամ ներպետական ցանկացած փաստաթուղթ, որտեղ ԼՂՀ-ն նշված կլինի Ադրբեջանի կազմում

Անընդունելի ենք համարում Արցախի հայկականությունը կասկածի տակ դնող և հնարավոր օտար տարրերի ներկայության կարևորությունն ընդգծող հայտարարությունները:

Արցախի Հանրապետության Ազգային ժողովի հայտարարությունը ներկայացնում ենք ստորև.

«Արցախի Հանրապետության ինքնիշխանությանն ու սուբյեկտայնությանը սպառնացող վտանգների և մարտահրավերների մասին

Ղարաբաղյան հիմնախնդրի տարեգրության ողջ ընթացքում պարբերաբար շրջանառվում են հիմնախնդրի ելույթները խեղաթյուրող և նենգափոխող հայտարարություններ, որոնք բարդացնում ու խճճում են հակամարտության

համապարփակ և վերջնական կարգավորման գործընթացը: Արթուրյալորելի ենք համարում տարբեր բաղաբանական ուժերի և գործիչների կողմից Արցախի սուբյեկտայնությունը, Նրա հայկական ապագան կասկածի տակ դնող կամ նվազեցնող ցանկացած հայտարարություն: Տարակուսելի է, որ վերջին նման հայտարարությունը ինչել է Հայաստանի Հանրապետությանը:

Շարունակությունը՝ էջ 2

Կապանում Իրանի գլխավոր հյուպատոսության բացումը՝ կարևոր ազդակ

Հայաստանի և մասնավորապես Սյունիքի շուրջ տեղի ունեցող ռազմաքաղաքական իրադարձությունների առնչությամբ Իրանի Իսլամական Հանրապետության դիրքորոշումը շարունակում է զբաղեցնել սյունեցիներին: 2021-ի տարեվերջյան զարգացումները, անշուշտ, որոշ առումով նորություն էին այդ տեսակետից:

Մեզ հետաքրքրող հարցերի շուրջ գրույցի հրավիրեցինք Երևանի պետական համալսարանի Արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու Վարդան Ոսկանյանին:

Պարոն Ոսկանյան, նախ՝ շնորհակալություն՝ մեր պարբերականին հերթական անգամ հարցազրույց տալու պատրաստակամության համար:

Ամառորի նախօրեին հայտարարություն տարածվեց առ այն, թե Իրանի իշխանությունները 15 օրով փակում

են հարևան երկրների հետ ցամաքային սահմանը՝ կորոնավիրուսի «Օմիկրոն» մանրէաէմբի տարածման սպառնալիքի պատճառով: Իսկապե՞ս ցամաքային սահմանի փակման պատճառը համաճարակային վտանգն էր, թե՞...

– Իրականում՝ այդ, իրանցիները փակել են Իրանի ցամաքային սահմաններն անխտիր



բոլոր հարեան պետությունների համար՝ Հայաստանի Հանրապետություն, Ադրբեջան կոչվող արհեստածին կազմավորում, Թուրքիա, Պակիստան... Բոլոր հարեան պետությունների հետ փակել են ցամաքային սահմանը, քանի որ իրանցիները ցանկանում են կառավարելի պահել համաճարակային իրավիճակն իրենց

Շարունակությունը՝ էջ 5

Ոչ մի տեղ առանց Սյունիքի ու Արցախի. առանց աշխարհագրական Հայաստանի այդ հզոր ողնաշարի մեր ամբողջական հայրենիքը գոյություն ունենալ չի կարող:
ԳԱՐԵԳԻՆ ՆՇԴԵՅ

Կառավարությունը 2ՊՄԿ 15% մասնաբաժինը հանձնեց հավատարմագրային կառավարման

Կառավարությունն հունվարի 5-ի նիստում հաստատեց «Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման հանձնելու որոշումը: Ըստ այդմ «Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ՝ Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող 15 տոկոս բաժնետոմսերով հավաստված իրավունքները հանձնվեցին «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ի հավատարմագրային կառավարմանը:

Փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանն ասաց. «Նախագծով նախատեսվում է «Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի՝ Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող 15 տոկոս բաժնետոմսերով հավաստված իրավունքները հանձնել «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ հավատարմագրային կառավարմանը՝ միաժամանակ պահպանելով բաժնետոմսերի նկատմամբ պետության սեփականության իրավունքը»:

«Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» 100 տոկոս պետական սեփականությամբ առևտրային կազմակերպություն է, որի մանդատներից մեկը պետության ռազմավարական նշանակության ակտիվներում պետության՝ որպես սեփականատիրոջ արդյունավետ ներկայացումն է:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն ասաց. «Տեղյակ եմ, որ 2000-ականներից ի վեր առաջին անգամ Հայաստանի Հանրապետությունը, կառավարությունն ունի բաժնեմաս Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում: Ընդ որում, մի շատ հետաքրքիր երևույթ կա, որ այս գործարքը շատերին կասկածելի է թվացել: Այն, որ պետությունն իր հիմնական ռազմավարական ակտիվից երկար տարիներ զրկվում էր, դա փաստորեն կասկածելի չէ, իսկ այն, որ պետությունը ձեռք է բերում, ոմանք փորձում են դրա մեջ կոռուպցիոն հետքեր և գործարքներ գտնել: Ես ուզում եմ պարզաբանել, որ կոռուպցիայի արդյունքում պետությունը ոչ թե ստանում է, այլ կոռուպցիայի արդյունքում պետությունը կորցնում է: Եվ դա մենք տեսել ենք երկար տարիներ, երբ 2000-ականներից իշխանությունը ներկայացնող անձանց հետ փոխկապակցված անձինք դարձել են Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի սեփականատեր: Հիմա հակառակ պրոցեսն է տեղի ունեցել, և 15-ից մի փոքր ավելի բաժնետոմսերի սեփականատերը ՀՀ վարչապետի աշխատակազմն է: Բայց այս փաստից բխում են որոշակի գործառնություններ, որոնք մենք կարծում ենք, որ վարչապետի աշխատակազմը չպետք է անի այդ գործառնությունները: Դրանք կառավարման հետ կապված ամենատարբեր գործառնություններ են, և այս բաժնեմասի կառավարումը մենք հանձնում ենք էլի մեր կողմից հիմնարկված «Հայաստանի ազգային հետաքրքրությունների հիմնադրամին»»:

Փաշինյանն ասաց, որ բաժնեմասի չափով ՀՀ կառավարությունը ներկայացուցիչ կունենա «Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ»-ի տնօրենների խորհրդում: Եվ նաև շահույթի բաշխման պարագայում տվյալ չափով շահաբաժինն արդեն կդառնա պետական բյուջեի եկամուտ: #

«Սյունյաց երկրի» հարցը Նիկոլ Փաշինյանին՝ դեկտեմբերի 24-ի ֆեյսբուքյան ասուլիսում

Մարտի վարչապետ, 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությանը եւ դրանից հետո (անընդհատ) կարեւորվում է հարողակցության ուղիների ապաշրջափակման կամ վերաբացման հարցը: Առաջին հայացքից ողջունելի մտադրություն է, բայց...

Ինչպե՞ս հասկանալ՝ ե՛ւ Դուք, ե՛ւ Ադրբեջանի դեկավարը կոնկրետ քայլեր եք ձեռնարկում (ոչ միայն որոշումների կամ հայտարարությունների տեսքով) Ադրբեջանին ցանկալի կամ այդ հանրապետության համար նպաստավոր ճանապարհների վերաբացման ուղղությամբ: Մինչդեռ, դրան զուգահեռ, անցած մեկ տարվա ընթացքում տարբեր դրսևորումներով շրջափակվել է Սյունիքի մարզի տարածքով անցնող հարողակցության մի քանի ուղի: Նկատի ունենք Գորիս-Կապան, Կապան-Ճակատեն, Կապան-Ագարակ գյուղի ենթաշրջան (Սեյիդլար գյուղով) ճանապարհները: Նկատի ունենք Վերիշեն-Սեւ լիճ, Խոզնավար-Սեւ լիճ, նաեւ Լորավանի հյուսիսային մերձակայքից դեպի Մեծ եւ Փոքր Իշխանասարների ստորոտ ձգվող դաշտամիջան ճանապարհները՝ մեզ համար տնտեսական լուրջ նշանակություն ունեցող:

Այդ ամենին զուգահեռ՝ օրեր առաջ վերահաստատեցիք Ձեր դիրքորոշումն Ադրբեջանի երկու հատվածը միմյանց կապող երկաթուղու (Մեղրիով) վերակառուցման ու վերագործարկման մասին՝ Հայաստանի համար նպաստավոր հանգամանք նշելով նաեւ Ռուսաստանի Դաշնության հետ երկաթուղային կապի բացումը: Եվ դա այն դեպքում, երբ Ռուսաստան գնալու համար կարելի էր չհասնել Մեղրի ու Նախընտրել մոտ 1000 կմ-ով ավելի կարճ հյուսիսային երկաթգծի հնարավորությունը:

Եվ ուրեմն՝ ներկայացրեք, խնդրեմ, հարողակցության ուղիների վերաբացման Ձեր ռազմավարությունը Սյունիքի մասով՝ նշելով նաեւ Սյունիքով անցնելիք ավտոտրանսպորտային ճանապարհի հնարավոր երթուղին, իսկ եթե այն (ինչպես հայտարարվել է) կարող է ձգվել Կուբաթլի-Խնձորեն-Գորիս քաղաք-Անգեղակոթ երթուղով, ապա՝ անվտանգության ի՞նչ երաշխիքներով:

ԱՍՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
«ԱՅՈՒՆՅԱՏ ԵՐԿԻՐ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳԻՐ

Վարչապետ Ն. Փաշինյանը պատասխանում է «Սյունյաց երկրի» հարցերին



Լրագրող. - «Սյունյաց երկիր» թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանն է հարցնում. «Ներկայացրեք, խնդրեմ, հարողակցության ուղիների վերաբացման Ձեր ռազմավարությունը Սյունիքի մասով՝ նշելով նաեւ Սյունիքով անցնելիք ավտոտրանսպորտային ճանապարհի հնարավոր երթուղին, իսկ եթե այն (ինչպես հայտարարվել է) կարող է ձգվել Սախասար-Խնձորեն-Գորիս քաղաք-Անգեղակոթ երթուղով, ապա՝ անվտանգության ի՞նչ երաշխիքներով:

Նիկոլ Փաշինյան. Ճանապարհների հարցը կուզեի բաժանել մի քանի մասի: Առաջին իրավական կարգավորումների խնդիրն է, որի մասին ինձ տրված առաջին հարցի պատասխանի մեջ նշեցի: Եթե իրավական կարգավորումների առումով համաձայնության ենք գալիս, մյուս հարցերը տեխնիկական բնույթ ունեն: Քանզի եռակողմ համաձայնագրի մեջ էլ արձանագրված է, որ Ադրբեջանի արևմտյան շրջանները Նախիջևանի Ինքնավար Հանրապետության հետ կապող ճանապարհի պիտի լինի: Բայց ես ուզում եմ դիտարկել փոխել, որովհետև, այնուամենայնիվ, այս ամենը տեղի է ունենում տարածաշրջանի կոմունիկացիաների բացման

...երբ մենք համաձայնության գանք Ադրբեջանի հետ իմ և Ձեր նշած հարցերի շուրջ, պետք է մեր դիտարկումն այն տրամաբանությամբ նայենք, որ մեր տեսանկյունից ունենանք մի ճանապարհ, որ հնարավորինս գրավիչ կլինի միջազգային տարանցիկ բեռնափոխադրումների առումով, որովհետև Հայաստանին կբերի շատ կոնկրետ օգուտներ:



տրամաբանության մեջ: Իմ ընկալմամբ՝ սա ոչ միայն ճանապարհ է՝ Ադրբեջանի արևմտյան հատվածները Նախիջևանի Ինքնավար Հանրապետության հետ կապող, այլ նոր միջազգային տարանցիկ ճանապարհ է, որի գործարկմամբ հետաքրքրված է նաև Հայաստանը: Հետևաբար՝ երբ մենք համաձայնության գանք Ադրբեջանի հետ իմ և Ձեր նշած

հարցերի շուրջ, պետք է մեր դիտարկումն այն տրամաբանությամբ նայենք, որ մեր տեսանկյունից ունենանք մի ճանապարհ, որ հնարավորինս գրավիչ կլինի միջազգային տարանցիկ բեռնափոխադրումների առումով, որովհետև Հայաստանին կբերի շատ կոնկրետ օգուտներ:

Այս համատեքստում է, որ նախկինում չենք բացառել ու չենք բացառում նոր ճանապարհի կառուցումը, որ մեր տեսանկյունից կլինի միջազգային հարողակցության կանոն ուղի, և եթե հետևել եք՝ ես հայ-վրացական միջկառավարական հանձնաժողովի խորհրդի նիստում այդ միտքը ձևակերպել եմ, եթե մեզ հաջողվի մեր արդեն իսկ նշած տրամաբանությունների և սկզբունքների շրջանակներում գալ համաձայնության, մեր նպատակադրումն է՝ մեր ունեցած Յուսիս-Հարավ նախագիծն իր բովանդակության և եռության մեջ ընդլայնել և այն դարձնել ոչ միայն Յուսիս-Հարավ, այլ Արևելք-Արևմուտք, այսինքն՝ մոտավորապես խաչաձև ճանապարհ, որն եականորեն կմեծացնի Նրա նշանակությունը:

Լրագրող. Սամվել Ալեքսանյանը հարցնում է, թե անվտանգության ի՞նչ երաշխիքներ կլինեն:

Նիկոլ Փաշինյան. Ինչի՞ անվտանգության, ո՞ւմ անվտանգության:

Լրագրող. Այդ ճանապարհով երթեցնողների, ենթադրում եմ:

Նիկոլ Փաշինյան. Այդ ճանապարհով երթեցնող ադրբեջանցիների մասին է խոսքը:

Լրագրող. Հայերն էլ երթեցնելու են Ադրբեջանի տարածքով:

Նիկոլ Փաշինյան. Փոխադարձաբար այդ երաշխիքները պիտի կոնկրետացնենք: Ընկալումն այն է, որ պիտի ուղեկցումներ կազմակերպվեն, այսինքն՝ անվտանգությունը պիտի ապահովվի: Ճանապարհը պիտի գործի երկրների տվյալներով և տարածքային ամբողջականության շրջանակներում: Այս պարագայում գործ ունենք իրավակարգավորումների խնդիր հետ, և եթե մեզ հաջողվի համաձայնության գալ, մյուս ամեն ինչը դառնում է տեխնիկական խնդիր: Անվտանգությունը, օրինակ, կազմակերպելու հարց է, և կա ըմբռնում, որ ուղեկցելը հնարավոր տարբերակներից մեկն է: //



«Որակի նշան 2021՝ տարվա լավագույն ապրանքանիշ և հանրային ծառայող» մրցանակակիրները՝ Սյունիքից

Դեկտեմբերի 19-ին Արամ Խաչատրյանի համերգարահում տեղի ունեցավ արդեն ավանդույթ դարձած «Որակի նշան 2021՝ տարվա լավագույն ապրանքանիշ և հանրային ծառայող» մրցանակաբաշխությունը: Ուսումնասիրությունների, հետազոտությունների և հարցումների արդյունքում լավագույն ճանաչված հանրային ծառայողները, պետական համակարգի աշխատակիցներն ու ընկերությունները տարբեր անվանակարգերում ստացան մրցանակներ:



Ոլորտում իրականացրած բարեփոխումների և արդյունավետ աշխատանքի համար «Որակի նշան» հանրային ծառայող» մրցանակ տրվեց «Մեղրու ճանապարհաշինարարական և շահագործման ձեռնարկություն» ընկերության տնօրեն Ազատ Գասպարյանին: Համայնքում իրականացրած բարեփոխումների և արդյունավետ աշխատանքի համար «Հանրային ծառայող» մրցանակ տրվեց Կապան խոշորացված համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանին:

Անընդունելի է միջազգային կամ ներպետական ցանկացած փաստաթուղթ, որտեղ ԼՂՀ-ն նշված կլինի Ադրբեջանի կազմում

Սկիզբը՝ էջ 1
տության վարչապետի կողմից՝ դեկտեմբերի 24-ին ՀԱՄ-ների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հարցերին պատասխանելու ընթացքում:

Արցախի ճակատագիրը որևէ քաղաքական ուժի մենաշնորհը չի եղել և չի լինելու: Արտահայտելով Արցախի Հանրապետության հանրային և քաղաքական լայն շրջանակների կարծիքն ու դիրքորոշումը՝ մեր անհամաձայնությունն ու վրդովմունքն ենք հայտնում հարցազրույցի ընթացքում հնչած մի շարք վնասակար և վտանգավոր ձևակերպումների ու գաղափարների առթիվ:

Մտահոգություն է առաջացնում այն փաստը, որ 1988 թ. ազգային-ազատագրական պայքարի՝ դարաբաղյան շարժման արդյունքների ֆոնին հնչեցվում են ձևակերպումներ, որոնք կասկածի տակ են դնում 1991 թվականի սեպտեմբերի 2-ին հռչակված և միջազգային իրավունքի Նորմերին լիովին համապատասխան ձևակերպված Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության գոյությունը և Նրա տևական պայքարը միջազգային ճանաչման հասնելու ուղղությամբ:

Նախորդ տարիների բանակցային գործընթացում հայկական կողմերի իրավական

և քաղաքական հիմքերը և մեր ազգային շահերի պաշտպանությունն այդ համատեքստում որևէ հակասության մեջ չէր մտնում միջազգային կառույցների և միջնորդների ներկայացրած դիրքորոշումների հետ:

Այն, որ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը երբեք չի անտեսվել միջնորդների կողմից նախկինում ներկայացված առաջարկություններում, հաստատվում է նաև ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կողմից տրված պարզաբանումներում:

Բանակցային գործընթացում տարբեր տարիների քննարկված աշխատանքային տարբերակների և բանակցային ձևաչափի հնարավոր փոփոխման մասին շահարկումները մտահոգիչ և վտանգավոր են:

Անընդունելի ենք համարում Արցախի հայկականությունը կասկածի տակ դնող և հնարավոր օտար տարրերի ներկայության կարևորությունը ընդգծող հայտարարությունները, որոնք մերժելի ու պարսավելի են Արցախի ազատության և անկախության համար իրենց կյանքը գոհաբերած հազարավոր հայորդիների հիշատակի դիմաց:

Գլուխ խոնարհելով արցախյան գոյապայքարի բոլոր նահատակների առջև, միաժամանակ երախտագիտություն



2021թ. միայն աշխատանքային խմբի խողովակով Սյունիքի մարզում իրականացվել է 1.1 մլրդ դրամի ծրագիր

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ 2021թ. դեկտեմբերի 29-ին տեղի է ունեցել Սյունիքի հարցերով միջգերատեսչական աշխատանքային խմբի ամփոփիչ նիստը:

Բացելով նիստը՝ վարչապետ Փաշինյանը նշել է.

«Բարև ձեզ հարգելի գործընկերներ: Ինչպես գիտեք, սույն թվականի հունվարի 15-ին վարչապետի որոշմամբ ստեղծվեց Սյունիքի հարցերով միջգերատեսչական աշխատանքային խումբ, և մենք այսօր հավաքվել ենք՝ ամփոփելու աշխատանքային խմբի այս տարվա արդյունքները: Պիտի արձանագրենք, որ 2021 թվականի ընթացքում Սյունիքի մարզում աշխատանքային խմբի խողովակով հատկացվել և իրականացվել է շուրջ 1.1 մլրդ դրամի ծրագիր: Այդ ծրագրերն ունեն բավական լայն ընդգրկում՝ գյուղատնտեսությամբ»:

յունից միևնույն սպորտ, և կարծում եմ, որ այս նոր միջավայրում կարևոր նշանակություն են ունեցել և ունեն Սյունիքի մարզի դիմակայունությունը բարձրացնելու ու ամրապնդելու նկատառումով:

Ցանկանում եմ ընդգծել, որ այսօր էլ, իհարկե, հիմա այս պահին կարճ ժամանակով ընդհատված են միևնույն ամառային տուրի ավարտը, Սյունիքի մարզում լայն թափով ընթանում, իրականացվում է այլընտրանքային ճանապարհների շինարարություն: Սա նույնպես չափազանց կարևոր ծրագիր է:

Ուզում եմ ասել նաև, որ մենք Սյունիքի մարզում միայն աշխատանքային խմբի խողովակով չէ, որ ծրագրեր են իրականացվում: Կուզենայի մի քանի ծրագրերի մասին խոսել: Մասնավորապես՝ կրթական ոլորտի: Յանտարիության ոլորտում մեր ռազմավարական բարեփոխումները որոշել ենք սկսել հենց Սյունիքի մարզից, և այդ նոր մոդելն առաջինը փորձարկվում է Կապան խոշորացված համայնքում՝ Սյունիքի մարզկենտրոնում, որտեղ ծրագիր իրականացնելու համար Կառավարությունը 9 մլրդ դրամի հատկացում է իրականացնում: Այսպիսի ծրագրեր կներդրվեն նաև Սյունիքի մյուս խոշորացված համայնքներում:

Ցանկանում եմ հիշեցնել նաև, որ Եվրամիության հետ համագործակցության արդյունքում նախատեսվում է շուրջ 80 մլն եվրոյի ծրագիր իրականացնել Սյունիքի մարզում՝ գոյություն ունեցող կառուցվածքները բարձրացնելու ծրագրի շրջանակում:

Այսօր մենք ակտիվ աշխատում ենք Յուրի-Յարավ ծրագրի իրականացման վրա՝ մասնավորապես, Միսիան-Քաջարան և Քաջարան-Ազարակ հատվածների շինարարությունը: Գույ ունենք գործընթացն արդեն մեկնարկել 2022 թվականի ընթացքում: Դա շատ խոշոր ծրագիր է, ընդ որում, ներառում է մի քանի կամուրջներ, 2 թունել՝ 7 և 8 կմ երկարությամբ: Ծրագիրը նույնպես շատ էական ազդեցություն է ունենալու ոչ միայն Սյունիքի մարզի, այլև ընդհանրապես Յայաստանի Յանտարիության հետագա զարգացման համար:

Ուզում եմ ընդգծել նաև, որ տարածաշրջանային կոմունիկացիաների բացման թեման նույնպես էական գործոն է Սյունիքի մարզի հետագա զարգացման համար: Մենք արդեն հայտարարել ենք, որ մեկնարկում ենք Երասխ-Ցուֆա-Օրդուբադ-Մեղրի-Յորադիզ երկաթուղու Մեղրիի հատվածի շինարարության նախապատրաստական աշխատանքները: Պիտի ընդգծել, որ այդ, իհարկե, մեզ բոլորիս հայտնի հանգամանքների բերումով, տարածաշրջանային կոմունիկացիաների բացման թեման ակնհայտորեն և հանրահայտ ձևով նաև որոշակի խնդիրներ և վտանգներ է պարունակում, բայց պիտի ընդգծել նաև, որ շատ մեծ հնարավորություններ է պարունակում: Մենք պետք է հետևողականորեն և համբերատար աշխատենք, որպեսզի վտանգները կառավարենք, իսկ հնարավորություններն ընդգծենք և կարողանանք ծառայեցնել Յայաստանի Յանտարիության, այդ թվում՝ Սյունիքի մարզի հետագա բնական զարգացմանը»:

Վարչապետի խորհրդակցական, աշխատանքային խմբի ղեկավար Ռոբերտ Ղուկասյանը, անդրադառնալով խմբի գործունեությանը, նշել է, որ առայսօր գումարվել է 17 կիստ՝ Սյունիքի տարբեր բնակավայրերում: Խումբը գործել է շուրջօրյա աշխատանքի ռեժիմով և փորձել հնարավորինս օպերատիվ արձագանքել խնդիրներին՝ շեշտը դնելով հատկապես սոցիալական, տնտեսական, անվտանգության հարցերի վրա:



Կառավարության ղեկավարին մանրամասներ են ներկայացվել Շուռնուխում կառուցվող թաղամասի շինարարության վերաբերյալ: Չեկուցվել է, որ աշխատանքները շարունակվում են, նախատեսվում է դրանք ավարտել պայմանագրով սահմանված ժամկետում՝ 2022 թ. առաջին կիսամյակում:

գային բաղադրիչների վրա:

Ապա աշխատանքային խմբի անդամ պատկան գերատեսչությունների ներկայացուցիչները զեկուցել են ըստ ոլորտների կատարված աշխատանքների մասին: Ներկայացվել են պաշտպանության, անվտանգության, ճանապարհաշինության, բնակարանաշինության, սոցիալական հարցերի լուծման, ենթակառուցվածքների բարելավման, շրջակա միջավայրի պահպանության ուղղությամբ միջոցառումները:

Վարչապետին զեկուցվել է Սյունիքի մարզի այլընտրանքային ճանապարհների՝ Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի Գորիս-Կապան տեղամասի առանձին հատվածներում երթևեկության անխափանությունն ապահովելու նպատակով 3-46 (Քաշունի գյուղի խաչմերուկից) - Բարձրավան, Տանձավեր - Շուռնուխ, Որոտան - Խոտ և Տ-8-49, /Տ-8-48/ - Լծեն ճանապարհահատվածների կառուցման/վերակառուցման ընթացքի մասին: Նշվել է, որ ընթացքի մեջ են գրունտային փնտրի ապահովման աշխատանքները, որոնք կերաշխավորեն այս ճանապարհահատվածների երթևեկելիությունը բոլոր տիպի մեքենաների համար, տարվա բոլոր եղանակներին: Նախատեսվում է, որ 2022թ. դրանք ամբողջությամբ ասֆալտապատված կլինեն: Նիկոլ Փաշինյանը ևս մեկ անգամ ընդգծել է նշված ճանապարհների կարևորությունը և հանձնարարել հնարավորինս արագացնել շինարարության ընթացքը:

Կառավարության ղեկավարին մանրամասներ են ներկայացվել Շուռնուխում կառուցվող թաղամասի շինարարության վերաբերյալ: Չեկուցվել է, որ աշխատանքները շարունակվում են, նախատեսվում է դրանք ավարտել պայմանագրով սահմանված ժամկետում՝ 2022 թ. առաջին կիսամյակում:

Վարչապետը հետաքրքրվել է նաև Սյունիքում գյուղատնտեսության ոլորտի զարգացման ուղղությամբ քայլերով: Ներկայացվել են ջրարբիացման համակարգերի կառուցման, գյուղտնտեսական տրամադրման, բիզնես նախաձեռնությունների խթանման, մի շարք համայնքներում նոր ենթակառուցվածքների ձևավորման ուղղությամբ իրականացված միջոցառումները: Այս համատեքստում ընդգծվել է օժանդակություն ցուցաբերող փորձագիտական խմբի կարևոր դերը: Ռոբերտ Ղուկասյանը զեկուցել է, որ փորձագիտական խմբի կողմից ներկայումս կատարվում է գյուղատնտեսական նշանակության հողերի թվայնացման աշխատանք, որը նախատեսվում է ավարտել մեկ ամսից: Արդյունքում ակնկալվում է ունենալ տնտեսական ներուժի գնահատում ըստ համայնքների, որի հիման վրա էլ յուրաքանչյուր համայնքի համար մշակվելու է գյուղատնտեսական ապագայի ծրագիր: Նիկոլ Փաշինյանը հանձնարարել է աշխատանքն ավարտելուց հետո արդյունքները քննարկել շահագրգիռ գերատեսչությունների հետ և, որպես արդյունավետ գնահատելու դեպքում, այն իրականացնել նաև մյուս մարզերի համար:

Մտքերի փոխանակության ընթացքում քննարկվել են մի շարք հարցեր և գաղափարներ, ներկայացվել են առաջարկներ:

Վարչապետ Փաշինյանը շնորհակալություն է հայտնել աշխատանքային խմբի և փորձագիտական խմբի անդամներին կատարված աշխատանքի համար և ընդգծել՝ Սյունիքի մարզի զարգացման օրակարգը բավական ընդգրկուն է և պետք է համբերատար աշխատել նախանշված առաջնահերթությունների կյանքի կոչման ուղղությամբ: //

ենք հայտնում համայն հայությունը, մասնավորապես 33 մեր հայրենակիցներին՝ Արցախի կողքին կանգնելու, նրա տառապանքներն ու զրկանքները միասին կիսելու համար:

Յայկական երկու հանրապետությունների եղբայրական փոխհարաբերությունների հիմքում տարիներ շարունակ անխափան գործել է դեռևս 1992թ. հուլիսի 8-ին Յայաստանի Յանտարիության Գերագույն խորհրդի ընդունված որոշումը, որը հստակ սահմանել է միջազգային հանրության լիիրավ անդամ Յայաստանի Յանտարիության վերաբերմունքը միջազգային ճանաչման ձգտող Արցախի Յանտարիության նկատմամբ: Այդ որոշմամբ 33-ը պարտավորվում է «հետևողականորեն սատար կանգնել Լեռնային Ղարաբաղի Յանտարիությանը և նրա բնակչության իրավունքների պաշտպանությանը»:

Սահմանվում է նաև, որ «Յայաստանի Յանտարիության համար անընդունելի համարել միջազգային կամ ներպետական ցանկացած փաստաթուղթ, որտեղ Լեռնային Ղարաբաղի Յանտարիությունը նշված կլինի Ադրբեջանի կազմում»: Այս բանաձևն արդիական է նաև այսօր:

Արցախի Յանտարիության Ազգային ժողովը, վերահաստատելով Արցախի ժողովրդի և իշխանությունների դիրքորոշումը Արցախի Յանտարիության ինքնիշխանության և անկախության հարցում, հայտարարում է՝ անընդունելի է առանց Արցախի իշխանությունների տեսակետը հաշվի առնելու դիրքորոշում հայտնելը, քանի որ Արցախի ապագայի հարցով որոշում ընդունելու իրավասություն ունեն միայն Արցախի Յանտարիության բաղաբաղիների կողմից ընտրությունների միջոցով ձևավորված իշխանությունները»:

27.12.2021



ՊՆ-ն պահեստագորայինների եռամսյա վարժական հավաքներ կանցկացնի

Պաշտպանության նախարարությունը երեք ամիս ժամկետով պահեստագորայինների վարժական հավաքներ անցկացնելու մասին 33 կառավարության որոշման նախագիծ է հրապարակել: Այս մասին տեղեկանում ենք իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքից:

Ըստ որոշման նախագծի՝ վարժանքները կանցկացվեն հունվարի 15-ից ապրիլի 15-ը: Վարժական հավաքներին կներգրավվեն մինչև 65 քաղաքացի, որոնցից 20-ը՝ բժշկական մասնագիտություններ ունեցող սպայական և 45-ը՝ ինժեներական մասնագիտություններ ունեցող շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի պահեստագորայիններ:

Վարժական հավաքների ապահովման համար, երեք ամիս ժամկետով, 2022 թվականի հունվարի 15-ից մինչև ապրիլի 15-ը, ռազմատրանսպորտային պարտականություններ ունեցող մարմիններից կներգրավվեն մինչև 45 միավոր տրանսպորտային միջոցներ: //

Կապանում սպորտային համալիր է կառուցվում

«Երևանի պետական համալսարանի շրջանավարտների միավորում» հասարակական կազմակերպությունը՝ Նախագահ Արսեն Բարսեղյանի գլխավորությամբ, Կապանում կառուցում է հանրային նշանակության գոտի: Կառուցվում է մարզահամալիր, բացօթյա լողավազան, մանկական խաղահրապարակ, ճեմուղիներ, սրճարան, հանգստի գոտիներ: Նախագծի ընդհանուր արժեքը կազմում է 1.74 մլրդ 33 դրամ: Մարզահամալիրի շինարարությունը նախատեսվում է ավարտել 2022 թվականի մայիսին:

«Մարզահամալիր կառուցելու գաղափարը ծնվեց այն պատճառով, որ նախ մենք արդեն որոշակի փորձառություն ունենք մարզահամալիր շահագործելու: Մենք ունենինք հողակտոր Սյունիքի մարզում, որը մեզ տրամադրված էր բազմաբնակարանոց շենք կառուցելու համար, սակայն ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ ջրերի հոսքը այն աստիճանի է, որ նպատակահարմար չէ շենք կառուցել: Դրանից հետո մենք որոշեցինք վերականգնել տարածքի նախորդող նշանակությունը: Պիտի տեղեկացնեն, որ խորհրդային Միության տարիներին այստեղ հենց լողավազան է եղել է: Պիտի

տեղեկացնեն նաև, որ ներգրավել ենք նաև որոշակի վարկային ռեսուրսներ: Այն պահին, երբ տարածքը հանձնվում էր մեզ, բնականաբար, շատ վատ վիճակ էր ու լողավազանն էլ չէր շահագործվում», – լրագրողների հետ զրույցում ասաց Արսեն Բարսեղյանը:

«Սյունիքի մարզում նման ենթակառուցվածք գոյություն չունի, իսկ սյունեցիների միանշանակ արժանի է կյանքի համար ունենալ ավելի լավ պայմաններ: Պատերազմի օրերին անգամ մենք գտնվել ենք շինարարական բռուն պրոցեսի մեջ ու որևէ վայրկյան կանգ չենք առել: Չենք կանգնել, որովհետև կանգնել՝ արդեն իսկ նշանակում է պարտություն: Սահմանը, կարծում ենք, անվտանգ է նաև աշխատանքով, ներդրմամբ և ստեղծագործությամբ: Բանաձևը սա է ու այլ տարբերակ ուղղակի գոյություն չունի: Անվտանգությունը սկսում է ժողովրդագրությունից, իսկ ժողովրդագրման համար պայման պիտի ստեղծել: Այստեղ մարզվող, պարապող, իր ֆիզիկականին հետևող երեխան, երիտասարդը, բնականաբար, շատ ավելի լավ է կարողանալու պաշտպանել իր հայրենիքը: Ես բոլոր ներդրողներին ուզում եմ կոչվել դիմել: Ուզում եմ դիմել, որ յուրաքանչյուրը իր հնարավորության սահմաններում ներդրումներ անեն ու



անեն Երևանից դուրս, դա շատ կարևոր է, որովհետև Հայաստանի առջև ծառայած խնդիրներից մեկը հենց տարածքային համաչափ զարգացման խնդիրն է», – հավելեց Բարսեղյանը:

Համալիրի կառուցման շինաշխատանքներին հետևում էր նաև Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանը:

«Նման ծրագիր իրականացնելը, այո, Կապան համայնքում մեծ անհրաժեշտություն էր: Այս համալիրը եզակի է լինելու Կապան համայնքում: Իրոք ստեղծվում է ժամանակակից պայմաններին համապատասխան համալիր: Լուրջ ներդրում է փաստորեն իրականացվում Կապան համայնքում: Սա տնտեսական ակտիվություն ապահովելու համար ևս կարևոր պրոցես է», – լրագրողների հետ զրույցում ասաց Փարսյանը:

Նշենք, որ համալիրը կոչվելու է InSport Syunik:

«ՀՐԱՊԱՐԱԿ ՕՐԱԹԵՐԹ»



Արտուշ Դուկասյանն ազատվել է Գորիսի պետական համալսարանի ռեկտորի պարտականություններից՝ պաշտոնավարման ժամկետը լրանալու կապակցությամբ

Տիգրանյանի գլխավոր արդյունքը, ըստ Արտուշ Դուկասյանի, Գորիսի պետական համալսարանի ինստիտուցիոնալ հավատարմագրումն էր՝ չորս տարի ժամկետով, ընդ որում՝ գործընթացը մեկնարկել էր 2019 թ. սեպտեմբերին:

Արտուշ Դուկասյանը նշանակվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի խորհրդակցական:

Գորիսի պետական համալսարանի ռեկտորի պարտականությունները ներկայումս կատարում է պրոռեկտոր Թեմիլան Մարությանը:

2021 թ. դեկտեմբերի 27-ին ՀՀ վարչապետի որոշմամբ հաստատվել է «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի խորհրդի կազմը: Առաջիկայում տեղի կունենա խորհրդի անդամակցության կազմակերպող ընտրությունները, որից հետո կհայտարարվի մրցույթ՝ Գորիսի պետական համալսարանի ռեկտորի թափուր տեղի համար: //

Շուշի՝ բերդաբաղաբ հայոց

Դեռ նոր հարսանիք են տեսնելու լեռներում...

«Հայոց Շուշիի մասին ենք ուզում ձայնել, արփիագարդ եւ հոյժ պանծալի բաղաբի մասին, որ երկրայինների մեջ հազվադեպ երկնայիններից է...»

Բայց լրագրային մեր պատումը գերծ է լինելու ողբից, լացից, տխրագին հառաչանքներից, հայ մարդու սրտի մորմոքը ցուցադրելուց, բանգի ողբասացությունը՝ հատկապես այս դեպքում եւ մեր պատմության փորձը նկատի ունենալով, հեռու է ողջամտությունից: Մեր պատումը նախ երկրպագություն է Շուշիին, բանգի հայոց մեջ շատերն անգամ չհասկացան ու չեն էլ գիտակցում, որ այն մեր լինելիության հավերժական առասպելն է... Մեր պատումն անբակտիլի հույսի եւ հավատքի փոքրիկ ցուլանք է առ այն, որ Շուշին անկասկածաբար վերադառնալու է հարազատ մոր՝ Հայոց Արցախի գիրկը, բանգի մեզ հետ է Տիրոջ անհաղթելի զորությունը... Մեր պատումը Շուշին գերած անօրեկից վրեժ առնելու եւ սրբազան բաղաբը բռնավորից ազատելու հրամայականն արթուն պահելու համեստ նկրտում է...»:

Սրտի անհանգիստ տրոփով գրված այս տողերը «Սյունյաց Երկիր. մշակութային» եռամսյա պարբերականի խմբագրականից են, որն հաջորդիվ հուշում է ընթերցողին, թե ինչ գանձեր ենք թողել շան երախում: Ապա ծանոթանում ենք հայահունչ եւ հայաշունչ բաղաբի անվան ստուգաբանությանը, այնուհետև՝ 1992-ի մայիսին բերդաբաղաբի ազատագրման ռազմագործողություններին, անհավանական այդ հաղթանակը կերտած հրամանատարներին, հայ բաջազուներին, հերոսամարտի պատմական նշանակությանը:

Հերթական էջերում տարողունակ հարցազրույցներ են Արցախի թեմի առաջնորդ Վրթանես Եպիսկոպոս Աբրահամյանի, Շուշիի վերջին բաղաբապետ Արծվիկ Սարգսյանի հետ, ով ամեն գիշեր երագում բերդաբաղաբն է տեսնում, իսկ թեմի առաջնորդն իմաստաբար հորդորում է՝ եթե հույսը դնես ուրիշներին վրա, եղածն էլ են կորցնելու... Այնուհետև ԱՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Լուսինե Ղարաբաղյանը ցավագին ապրումներն է կիսում. «Էրդրդանը թեք մեր հոգու մեջ՝ Շուշի գալով, ես եղեռնի զգացողություն ունեցա, վերապրեցի 1915 թիվը...»: Եվ տեղեկացնում, որ վերջին պատերազմից հետո 6000 աշակերտ դարձել է դպրոցագուրկ եւ տնագուրկ, 1618 ուսուցիչ մնացել է առանց աշխատանքի, 617 հազար գիրք, 12 «Արմաթ» ինժեներական լաբորա-



տորիա՝ բարբարոս թշնամուն: Օկուպացված են 2000 հուշարձան՝ 536 խաչքար, 13 վանական համալիր, 122 եկեղեցի, բազմաթիվ ամրոցներ եւ արգելոցներ: Շուշիի թանգարաններում մնացել են 20885 թանգարանային ցուցանմուշներ, գորգեր... «Բայց չեն վիստվում, արդարությունը հաղթանակելու է», – իր լավատեսությունն ընթերցողին է փոխանցում գրուցակիցը:

Պարբերականի էջերից մի բանիսում ներկայացված են բանաստեղծություններ՝ ձոնված բարբարոսի շրթաններում հայտնված պանծալի բաղաբին, մեծածավալ հատվածներ Սերո Խանգույանի «Շուշի» վեպից, բաղաբը՝ փոստային բացիկներում, ինտրյա կրթական օջախները, ոչ միայն Շուշիում ծնված մեծանուն հայեր, ովքեր անցյալում գործունեություն են ծավալել այնտեղ, ծաղկեցրել մշակութային կյանքը՝ գրականություն, երաժշտություն, թատերական արվեստ: Եվ այս ամենը՝ ամբողջացված լուսանկարներով:

Պարբերականի ընթերցողն առանձնակի լարվածությամբ է ծանոթանում 1920 թ. մար-

տի 23-26-ը Շուշիում տեղի ունեցած հայերի կոտորածի մասին՝ Ավետիք Իսահակյանի ձեռագրի գրառված՝ ակադեմիկոս Միլոս Մարգարյանի հիշատակարանից: Լույս է ընծայում այդ ստեղծագործության համառոտակի պատմում են նաեւ մեծանուն Հրաչյա Աճառյանը, Լեոն, Մարիետա Հախիկյանը, Լադեժյա Մանուկյանը, Օրջոնիկիձե՛ն, Սերո Խանգույանը:

«Շուշին՝ Արցախի հոգեւոր թեմական կենտրոն» խորագրի ներքո ներկայացված են բաղաբի եկեղեցիները, դրվագներ հոգեւոր կյանքի անցյալից՝ հին ու նոր լուսանկարներով, եկեղեցական պատկառելի գործիչների դիմանկարներով, ծավալուն հրապարակումներով: Բա Շուշիի թանգարանները՝ կերպարվեստի, բաղաբի պատմության, գորգերի, դրամների, երկրաբանության: Բա կրթօջախները՝ տեխնոլոգիական համալսարան, կիրառական արվեստի ինստիտուտ, երաժշտական դպրոց, հումանիտար թիւթ՝

Սերո Խանգույանի պատմություններով, լուսանկարային գեղեցիկ պատկերներով: Ո՞ր մեկը թվարկես, եւ ինչպե՞ս հոգի չնդկտա...

Թե որբան երգեր են ձոնվել առայժմ կորսված շքեղ բերդաբաղաբին՝ դժվար է ասել: Լաեւ այդ երգերից մի բանիսին է ծանոթանում ընթերցողը՝ Գուսան Հայկազուն, Արթուր Գրիգորյան, Արգաս Ոսկանյան, այլք:

Եվ այդ երգերը դեռ պիտի հնչեն, եւ դեռ նոր հարսանիքներ պիտի լինեն Արցախի լեռներում: Այս հավատամքով եւ գորանում էջ առ էջ ըմբռնվելով «Սյունյաց Երկիր. մշակութային» պարբերականի հերթական համարը: Իսկ նախորդը նվիրված էր ժամանակին Սյունյաց անառիկ աշխարհը փրկած դյուցազակերպ Լճիճիին, ում անպարտելի ոգուն ենք ապավինելու ազգովի:

Երախտապարտ լինենք այդ ոգին մեզ փոխանցող մարդկանց, որ ժայռի նման կանգնած են ամուր՝ ընդդէմ մահաբեր հողմերի...

ՏԱԹԵՎԻԿ ԴԱՐԱԳՅՈՒՅՈՒՆ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»
ՕՐԱԹԵՐԹ
24.12.2021

Կապանում Իրանի գլխավոր հյուպատոսության բացումը՝ կարևոր ազդակ

Սկիզբը՝ էջ 1

երկրում: Հետեւաբար՝ սահմանների փակումը բաղաբաշխական ենթատեքստ չունենք:

– «Իրան» գործակալությունն օրեր առաջ տեղեկատվություն տարածեց Կապան քաղաքում Իրանի գլխավոր հյուպատոսություն բացելու մասին: **Դուք դա լուրջ ազդակ համարեցիք առ այն, թե որքան կարևոր է համարում պաշտոնական թեհրանը Հայաստանի Սյունիքի մարզը հայ-իրանական հարաբերությունների համատեքստում: Նման դիրքորոշում հայտնելու համար, հավանաբար, հիմքեր ունեիք:**

– Այո, իրանցիները Կապանում հյուպատոսության բացմամբ միանգամից մի քանի ազդակ են հղում. առաջինը, բնականաբար, ուղղված է Հայաստանի հանրությանը. դա նշանակում է, որ իրանցիները Սյունիքի հարցում դրսեւորելու են անկողորմելի անզիջող դիրքորոշում, խոսքը հատկապես աղբյուրաբանաբանական վտանգին դեմ հանդիման Հայաստանին մենակ չթողնելու դիրքորոշման մասին է:

Երկրորդ՝ այդ քայլը հստակ ուղերձ էր Բաքվի բռնապետին առ այն, որ Սյունիքի մարզի նկատմամբ ցանկացած ուսնձգություն, ըստ էության, բախվելու է նաեւ իրանական դիվանագիտական ներկայությանը, որովհետեւ, ինչպես գիտեք, Հայաստան-Իրան հարաբերություններում հենց Սյունիքի մարզն է այն կենսական կարեւորության հատվածը, որն ապահովում է Հայաստանի եւ Իրանի միջեւ ոչ միայն ցամաքային հաղորդակցությունը, այլ նաեւ Իրանի մասնելու եւս մի հնարավորություն է տալիս՝ դեպի հյուսիս՝ իր տնտեսական ու քաղաքական ծրագրերն առաջ տանելու ուղղությամբ, քանի որ, փաստորեն, Հայաստանին եւ Սյունիքի մարզին միակ այլընտրանք մտում է աղբյուրաբանաբանական մեկ ընդհանուր աշխարհագրական տարածքը: Այդ երկու պետությունը ձեւական առումով առանձին են, բայց, հաշվի առնելով նրանց շահերի համընկնումը, իրականության մեջ գործ ունենք միասնական աշխարհաբանական տարածքի հետ, որի միակ այլընտրանքը Հայաստանի Հանրապետությունն է՝ դեպի հյուսիս իրանական ելքն ապահովելու համար: Կա եւս մի շատ կարեւոր հանգամանակ, որի վրա քիչ են ուշադրություն դարձնում. հայտնի գործակալություններից հետո Իրանը հետ չի քաշել գործերն Աղբյուրաբանի հետ սահմանի ամբողջ երկայնքից: Սա ցուցիչ է, թե Իրանը որքան ուշադիր է իր հյուսիսային սահմանների նկատմամբ, եւ թե դիվանագիտական, թե ռազմաքաղաքական զայման գործիքակազմեր է կիրառում Աղբյուրաբանին սանձելու, ինչու չէ՞ նաեւ Հայաստանի դիրքերն ամրապնդելու համար: Դիվանագիտական գործիքների կիրառման օրինակ է Կապանում հյուպատոսություն բացելու որոշումը:

– **Աղբյուրաբան-Իրան հարաբերությունների վարվածությունը, որն ինչ-որ չափով պայմանավորված էր Սյունիքի շուրջ զարգացումներով, որին ակնատես եղանք աշնանը, կարծեք, հարթվեց: Արդյո՞ք ճիշտ է մեր դիտարկումը:**

– Իրանաաղբյուրաբանական հարաբերություններում առանց բացառության որեւէ խնդիր չի լուծվել, այսինքն՝ խնդիրների ամբողջ համակցությոը, որոնք պարբերաբար բերում են այդ երկրների միջեւ լարվածության աճին, այժմ էլ առկա է: Մասնավորապես՝ խոսվում է Աղբյուրաբանի տարածքում ահաբեկչական կազմավորումների ներկայության եւ դրանց վերաբերյալ իրանական դիրքորոշման մասին: Խոսքն Աղբյուրաբանի ներսում հսկայական խարախային ազդեցության մասին է, որը չի կարող չանհանգստացնել իրանական կողմին՝ հաշվի առնելով Իրան-Իսրայել լարված հարաբերությունները: Այնուհետեւ՝ Աղբյուրաբանի ներսում շիա խմբավորումների գոյությունն ու նրանց վրա առկա ճնշումները, որ շարունակվում է: Աղբյուրաբանը դեռ որեւէ դրական քայլ այս ուղղությամբ չի կատարել: Ավելին՝ Աղբյուրաբան այդ խմբավորումները համարում է իրանական ինկվերտը շարաս-

յուն երկրի ներսում: Թուրքական օրինությամբ եւ ֆինանսավորմամբ Իրանի ներսում պանթուրքական խմբավորումների առկայությունը եւս խաթարում է այդ պետությունների հարաբերությունները. նման խմբավորումներն Իրանի ներսում խթանում են ներքին անկայունությունը: Թե՛ նշածս խնդիրները, թե՛ բազմաթիվ այլ խնդիրներից որեւէ մեկը չեն լուծվել: Ուստի՝ իրանցիներն այս փուլում առաջնային համարելով իրենց հարաբերությունների խնդիրը Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ, փորձում են իրենց սահմանների երկայնքով ապահովել որոշակի կայունություն, ինչը հնարավորություն կտա Իրանին նաեւ Վիեննայում ընթացող միջուկային համաձայնագրի բանակցություններում ունենալ ավելի ամուր դիրքեր:

Նույնիսկ, չնայած լարվածության որոշակի նվազմանը եւ պաշտոնյաների փոխադարձ այցելուին, որեւէ խնդիր Իրան-Աղբյուրաբան հարաբերություններում չի լուծվել:

– **Նիկոլ Փաշինյանն ու Իլհամ Ալիևը դեկտեմբերի 14-ին Բյուրաբանում (ԵՄ խորհրդի նախագահ Շարլ Միշելի միջնորդությամբ) տեղի ունեցած հանդիպման ընթացքում վերահաստատեցին իրենց որոշումն ու պայմանավորվածությունը՝ Երասխ-Ջուլֆա-Օրորբադ-Մեղրի-Հորադիզ երկաթուղու կառուցման ու գործարկման վերաբերյալ: Ընդ որում՝ վարչապետը նշեց, որ այդ երկաթգծի վերաբացմամբ հաղորդակցության նոր ուղի կբացվի Հայաստանի և Իրանի միջև՝ Ջուլֆայով, ինչը դրական ազդեցություն կունենա երկու երկրի տնտեսական հարաբերությունների զարգացման վրա: Իսկապե՞ս դա այդքան մեծ նշանակություն ունի Իրան-Հայաստան հաղորդակցության համար: Մի՞թե մեզ չի բավարարում ներկայումս գործող տրանսպորտային ուղին՝ Սյունիքով: Արդյո՞ք դա չի նշանակում, որ սյունիքյան ուղին կկորցնի իր ներկայիս (կամ՝ վերջին 30 տարում ունեցած) նշանակությունը: Իրանը լույսնա՞ն ոգևորված է երկաթուղային այդ ճանապարհի վերագործարկմամբ:**

– Նշված երկաթուղային հատվածը, որն իրանական Ջուլֆան միացնելու է Ջուլֆայի հետ եւ, Երասխի միջոցով, Հայաստանի Հանրապետությանը, Իրանի համար ունի կարեւոր նշանակություն, եթե հաշվի առնենք մեկ հանգամանակ՝ Իրանը կկարողանա կապվել Ռուսաստանի հետ՝ Հայաստանի եւ Վրաստանի տարածքով: Այո, իրանցիներն այդ երկաթուղու ապաշրջանափակումը դիտարկում են որպես դրական հնարավորություն, բայց դրան զուգահեռ առկա են նաեւ ռիսկեր, հատկապես, եթե հաշվի առնենք հանգամանքը, որ Հայաստանն Իրանի հետ պատրաստվում է ցամաքային հաղորդակցության բարձր մակարդակ ապահովել Հյուսիս-Հարավ մայրուղու՝ Սյունիքով անցնող հատվածի միջոցով: Առկա է որոշակի անհանգստությունն առ այն, որ Սյունիքի ցամաքային ուղին, այդ երկաթգծի գործարկումով, կարող է կորցնել իր նշանակությունը հայ-իրանական համագործակցության համատեքստում: Իրավիճակը բարդանում է նաեւ նրանով, որ Կապան-Գորիս ճանապարհի մի հատվածում, աղբյուրաբանական բռնազավթման արդյունքում կամ հետեւանքով, իրանական ծանր բեռներ տեղափոխող բեռնատարները հանդիպում են դժվարությունների: Չնայած նրան, որ Տաթև-Կապան ճանապարհը նորոգվել է, իրանական ծանր բեռներ տեղափոխող բեռնատարների համար այդ ճանապարհը չի համապատասխանում տեխնիկական չափորոշիչներին, որի հետեւանքով նրանք ստիպված են լինում օգտվել Կապան-Գորիս ճանապարհից՝ անցնելով աղբյուրաբանական չափերտավոր անցակետով:

Մենք պետք է զննազանենք առաջնային եւ երկրորդական խնդիրները. եթե Հայաստանի Հանրապետությունը կարող է ապահովել 200 միլիոն դոլարի ներդրում (մոտա-

վորապես այդքան է գնահատվում Մեղրիի հատվածում երկաթուղու վերականգնումը), ապա այդ ներդրումները պետք է ուղղորդվեն ոչ թե այդ երկաթուղու կառուցմանը, որն ապահովելու է նաեւ Թուրքիա-Աղբյուրաբան կապը, այլ Սյունիքի մարզում Հյուսիս-Հարավի շինարարությանը:

– **Արդյո՞ք Իրանի Իսլամական Հանրապետության համար միևնույն կլինի, թե իրավական ի՞նչ ռեժիմով է գործելու Մեղրիով անցնող երկաթուղին:**

– Իրանցիները բազմիցս շատ բարձր մակարդակով՝ գրեթե բոլոր բարձրաստիճան պաշտոնյաների մակարդակով, հայտարարել են, որ Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքով որեւէ՝ այսպես կոչված՝ միջանցք կամ որեւէ կառույց, որը դուրս կլինի Հայաստանի Հանրապետության վերահսկողությունից, իրենց համար անընդունելի է: Հայ-իրանական հարաբերություններն Իրանի համար էական նշանակության շահերի գոտի են: Հետեւաբար՝ իրանական կողմը՝ իր ունեցած ամբողջ գործիքակազմով է հնարավորություններով, գրեթե մեզ հետ հավասար պայքարում է թուրք-աղբյուրաբանական այդ վտի նկրտման դեմ, որը միտված է հանելու Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի տարածքով միջանցք կամ միջանցքներ ստանալու: Դա պանթուրքական ծրագրի կարեւոր բաղադրիչ է՝ 100 տարվա վարեմիտություն ունեցող, որի ուղղությամբ թուրքական կողմը շարժվում է մեթոդական քայլերով: Բայց կրկնեմ՝ այստեղ բացվել է համագործակցության շատ հետաքրքիր տիրույթ, որը հնարավորություն կտա պանթուրքական ծրագրի դեմ պայքարել ոչ թե միայնակ, այլև Իրանի օգնությամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նման չափերտավոր միջանցքը ձեռնարկելու չի լինելու ոչ մի պարագայում նաեւ Ռուսաստանին, նաեւ ռուսական կողմի աջակցությունը կարելի է ակնկալել: Ստեղծվում է հետաքրքիր հարթակ՝ Հայաստան-Իրան-Ռուսաստան ձեւաչափով, որը միտված կլինի ոչ միայն պանթուրքական այս ծրագիրը տապալելուն, այլև մեր տարածաշրջանում հակասահաբեկչական պայքարն առաջ մղելուն: Նման ազդակներ արդեն Ռուսաստանի կողմից լույսնաբերել են. ինչպես հիշում եք՝ Ռուսաստանն ամենաբարձր պաշտոնյաներից մեկի մակարդակով հայտարարել էր 44-օրյա պատերազմի ընթացքում ահաբեկիչների ներկայության մասին:

– **Անկախության տարիներին, որքանով տեղյակ ենք, 2-3 ծրագիր առաջ բաշվեց՝ Հայաստան-Իրան երկաթգծի կառուցման համար (Աղբյուրաբանի տարածքը շրջանցող): Ինչու՞ այդ ծրագրերը կյանքի չկոչվեցին և առհասարակ մոռացվեցին՝ առաջնայնությունը զիջելով Երասխ-Ջուլֆա-Իրան երկաթգծին:**

– Ընդհանրապես Հյուսիս-Հարավ ավտոճանապարհի շինարարությունը, եւ նաեւ դա պնդել եմ ու գրեթե մեկ տասնամյակ խոսում եմ այդ մասին, որ Սյունիքի հատվածից, այսինքն՝ Հայաստան-Իրան սահմանից պետք է սկսել, բայց, ցավոք սրտի, որքանով տեղյակ եմ, ժամանակին Հայաստանի Հանրապետության վրա եղել են որոշակի դիվանագիտական ճնշումներ օտար ուժերի կողմից, որպեսզի, հաշվի առնելով Արեւմուտքի եւ Իրանի լարված հարաբերությունները, այդ ծրագիրը Սյունիքի կողմից չսկսվեր: Ամեն դեպքում թույլ է տրվել սխալ: Իսկ Հայաստան-Իրան երկաթուղու ծրագիրը որեւէ պարագայում չպետք է մոռացության մատնվեր. հիմա մենք ակնատես ենք, որ այդ ծրագրի մասին ոչ միայն չեն խոսում, այլ այդ ծրագիրը, կարծեք, դուրս է մնացել մեր օրակարգից: Հայաստան-Իրան ուղղակի երկաթուղու ծրագիրը չափազանց կարեւոր կլիներ ոչ միայն տնտեսական, այլև Հայաստանի աշխարհաբանական դիրքերն ամրապնդելու, ինչպես նաեւ աղբյուրաբանական շրջափակումը հաղթահարելու իմաստով: Եթե մենք այդ երկաթուղու ծրագիրը կյանքի կոչենք, ապա, կարծում եմ, այսօր Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում կունենայինք շատ ավելի բարվոք իրավիճակ:

Հետեւաբար՝ թե՛ Հայաստան-Իրան երկաթուղու ծրագիրը պիտի գոնե քաղաքական օրակարգ բերվի, թե՛ Հյուսիս-Հարավ մայրուղու կառուցմանը պիտի լրջազույն ուշադրություն դարձվի:

– **Երբ 2021-ի աշնանն անցակետ կամ մաքսակետ կարգվեց Գորիս-Կապան ճանապարհին, երբ (դրանից առաջ՝ ամառա-**

նը) մի քանի օրով (Կարմրաբարի հատվածում) շրջափակվեց Գորիս-Կապան մայրուղին, մեզանում այլընտրանքային ճանապարհների կառուցումն իսկապես հրամայական դարձավ:

Հենց այդ ժամանակ էլ Իրանի Իսլամական Հանրապետությունը պատրաստակամություն հայտնեց՝ աջակցել Հայաստանին՝ այլընտրանքային ճանապարհների կառուցման գործում:

Արդյո՞ք Իրանի պատրաստակամությունը պատշաճ ըմբռնումի արժանացավ մեզանում և գործնական դրսևորումներ ունեցավ:

– Ես կարծում եմ՝ որ մենք պետք է աշխատեինք երկու ուղղությամբ՝ ոչ միայն այլընտրանքային ճանապարհներ կառուցելու, այլև Ռոտտան-Գորիս ճանապարհի հայտնի հատվածն աղբյուրաբանական բռնազավթումից ազատագրելու, ինչի վերաբերյալ ազդակներ եղել են Իրանից: Բայց, ցավոք սրտի, այդ հնարավորությունը բաց է թողնվել: Հայաստանի ցանկացած իշխանություն, որը մտածում է մեր պետության անվտանգության եւ ապագայի մասին, պետք է այս հարցին անպայմանորեն անդադառնա՝ նաեւ հաշվի առնելով հանգամանքը, որ վերջին եռակողմ հանդիպման ընթացքում Ռուսաստանի Դաշնության նախագահը հստակորեն հայտարարեց, թե Հայաստանի եւ Աղբյուրաբանի միջեւ սահմաններն անորոշ են, հետեւաբար՝ աղբյուրաբանական ներկայությունը Գորիս-Կապան ավտոճանապարհի Ռոտտանի հատվածում եւ ճակատների հատվածում, ըստ էության, անօրինական է: Այսինքն՝ այդ տարածքներն աղբյուրաբանական տարածք չեն: Աղբյուրաբանի համար լավագույն դեպքում դա կարելի է դիտարկել որպես վիճելի տարածք, իսկ հայկական շահերի տեսանկյունից՝ դա Հայաստանի Հանրապետության տարածք է:

Կապան-Գորիս ճանապարհահատվածի աղբյուրաբանական անցակետը ոչ միայն տնտեսական նշանակություն ունի, այլև միտված է հայ-իրանական հարաբերությունները խոչընդոտելուն, ինչպես նաեւ՝ Հայաստանի Հանրապետության ներքին տեղաշարժերը խաթարելուն:

Ինչ վերաբերում է այլընտրանքային լուծումներում իրանական կողմի ներգրավմանը, ցավոք սրտի, Իրանի պատրաստակամությանը պատշաճ արձագանք չի եղել Հայաստանի կողմից: Ես տեղյակ չեմ, թե ինչ սահմանափակումներ կան, զուցե Հայաստանի վրա կրկին ճնշումներ կան՝ իրանական կողմի ներգրավման առումով, բայց այժմ Հայաստանը գտնվում է այնպիսի իրավիճակում, որ նման ճնշումների առջեւ չպիտի ընկրկի, իսկ իրանական կողմը պետք է ներգրավված լինի նաեւ ճանապարհաշինարարական գործընթացներում:

– **Անցած դեկտեմբերի 24-ին ՀՀ վարչապետն Արցախի կարգավիճակի առնչությամբ նկատառումներ հայտնեց, որն ինչ-որ չափով ցնցեց հայ հանրությանը:**

Վարչապետի դիրքորոշմանը հակադրվեցին Արցախի իշխանությունները, ընդ որում՝ առաջին անգամ:

Արդյո՞ք այդ ամենին արձագանքեցին Իրանի իշխանությունները:

– Իրանական կողմից արձագանքները շատ թույլ են: Ակնհայտ է, որ Իրանի համար այժմ չափազանց կարեւոր է հատկապես հարավկովկասյան տարածաշրջանում իր դիրքերի ամրապնդումը: Այդ ամրապնդումը փորձում են իրականացնել՝ որոշակիորեն հաշվի առնելով նաեւ Արցախյան հիմնախնդրի ապագան, որը նախանշվել է Իրանի հոգեւոր առաջնորդի հայտնի ձեւակերպման մեջ, որը պարունակում էր մի շարք կետեր: Այդ կետերի համաձայն, չնայած շեշտադրվում էր Աղբյուրաբանի տարածքային ամբողջականության հանգամանքը, բայց միեւնույն ժամանակ հստակորեն եւ առաջին անգամ նման բարձր մակարդակով՝ իրանական կողմն արձանագրում էր արցախահայության անվտանգության խնդիրը: Ուստի եւ Իրանի հետ այս ուղղությամբ աշխատելու պարագայում մենք կարող ենք հենվել հենց հոգեւոր առաջնորդի՝ արցախահայության անվտանգությունն ապահովելու դիրքորոշման վրա, որն ուղենիշ է հայ-իրանական հարաբերություններում Արցախյան խնդրի շուրջ համատեղ դաշինք ձեւավորելու համար:



Հավերժ փառք Արցախյան պատերազմում նահատակված հայոց քաջորդիներին



Ավանեսյան Բորիս. շտապում էր երջանիկ լինել

Ավանեսյան Բորիս Վրեժի. ծնվել է 1990թ. փետրվարի 8-ին Կապանում: Սովորել է Կապանի թիվ 9, ապա՝ թիվ 10 դպրոցներում: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Այու-Նիքի տարածաշրջանային պետական բուհ: 2008թ. գորակազմվել է բանակ, ծառայել Գորիսի գորամասում:

2016թ. ամռանացել է, ունի 2 երեխա: Աշխատում էր Կապանի լեռնահարստացման կոմբինատում:

Բորիսը ծնողներ չուներ: Հայրը մահացել էր, երբ Բորիսը փոքր էր եղել, մորն օձը խայթել էր Արցախ գործուղման ժամանակ. Կապանի գորամասում խոհարար էր աշխատում տիկին Արմինեն և գործընկերները պահպանում էին Արցախ մեկնել:

Բորիսի մասին մեզ կհիշե՛ք՝ Մարիամն է պատմում. «Շատ գեղեցիկ սիրո պատմություն էր ներքին: Բորիսը կյանքում բազմաթիվ դժվարություններ էր տեսել, 22 տարեկանում որբացել էր: Շտապում էր երջանիկ լինել: Մեր համատեղ կյանքի սկզբում զգացվում էր այդ շտապողականությունը. երեք ամսվա ընթացքում նշանադրվեցինք ու հարսանիք արեցինք: Զետո ծնվեց մեր աղջիկը, ում նրա վաղամտերիկ մայրիկի անունով՝ Արմինե, կոչեցինք: Տղայիս էլ նրա հայրիկի անունով ենք վարումսան անվանակոչել:

Իսկապես երջանիկ էինք, նա էլ էր ասում, որ իր կյանքի երջանիկ օրերն է ապրում: Ծնվեց մեր տղան, թվում էր, թե կյանքը մեզ իրենցական երջանկություն է նվիրել:

2020 թ. սեպտեմբերի 1-ին Նշեցինք տղայիս մեկամյակը, 27-ին սկսվեց պատերազմը: Երբ ստացավ գորահավաքի նամակը, խնդրեցի չգնա, խնդրեցի զինկոմիտեի ատմում ասել, որ երկրորդականի ծնողագուրկ է, ասաց՝ ճակատագրի դեմ պայքարել չի կարելի ու գնաց: Նրան Ֆիզուլի /Կարանդա/ էին տարել: Հոկտեմբեր օրը պիտի վերադառնար՝ հերթափոխ էր: Ավանեսյանները պատմում են, որ մի բանի հոգու կյանք է փրկել իր կյանքի գնով: Մարմնում 38 բեկոր կար:

Մենք բազմաթիվ նպատակներ ունեինք, հիմա այդ նպատակներից յուրաքանչյուրը պիտի ի կատար ածեմ աշխատում եմ, ընդունվել եմ համալսարան, որ բարձրագույն կրթություն ստանամ, երեխաներիս տանում եմ խմբակներ:

Տղաս հայրիկին չի հիշում, երբ զոհվեց, կարոտից սթրես ունեցավ, մի բանի օր բարձր ջերմություն ուներ, խոսքի գարգացումը կանգ առավ: Իսկ աղջիկս, դա մի ուրիշ պատմություն է, նրանք անտեսանելի թելերով կապված էին միմյանց, ամեն գիշեր լաց է լինում հորն է պահանջում: Բացատրել են, որ հայրիկը հերոսացել է ու երկնքում է, բայց նա էի սպասում է: Նկարները բարձի տվի է պահում:

Նա չափազանց համեստ էր, բոլորը կվկայեն, որ շրջապատում որեւէ մեկին չի նեղացրել: Կյանքը նրան շատ անգամ էր հարվածել, բայց նա չէր կորուցել, ընդհակառակը՝ տարիքի համեմատ շատ հասուն և ուժեղ մարդ էր դարձել, ով վստահություն էր ներշնչում: Մենք գիտեմք, որ հայրենիքը պաշտպանելը նրա ընտրությունն էր, գիտեմք նաեւ, որ այս կյանքում նրա նպատակը, սերը, ուրախությամբ

յունն ու երջանկությունը մենք էինք: Պիտի երեխաներս մեծ բարձունքների հասնեն, պիտի իրենց հորն արժանի մարդիկ լինեն, դա հիմա իմ ապրելու բանաձեւն է...»:

Բորիս Ավանեսյանը զոհվել է 2020 թ. հոկտեմբերի 15-ին: Հուղարկավորվել է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում՝ 2020 թ. հոկտեմբերի 18-ին:

»



Ավետիսյան Մարտիկ. «Հայրենիքը կյանքից թանկ հասկացություն է»

Ավետիսյան Մարտիկ Պապաշի. ծնվել է 1960 թ. հուլիսի 2-ին Կապանի շրջանի Դավիթ Բեկ գյուղում, սովորել է գյուղի միջնակարգ դպրոցում, ապա Կապանի ավտոդպրոցում: Ծառայել է խորհրդային բանակում: Ամուսնացած էր՝ ունի երեք զավակ:

Կամավոր մասնակցել է Արցախյան առաջին պատերազմին: Հայրենի գյուղը պաշտպանելը, այնտեղ ապրելն ու արարելը Մարտիկը յուրաքանչյուր հայի, առավել եւս՝ սյունեցու պարտքն էր համարում: Եվ տեր էր իր համոզմունքին՝ ապրում ու արարում էր Դավիթ Բեկում, ու երբ Ադրբեջանը 2020-ի սեպտեմբերի 27-ին հարձակվեց խաղաղ Արցախի վրա, Մարտիկը կրկին կամավորագրվեց:

Մարտիկի մասին մեզ եղբորորդին՝ Վարդանն է պատմում. «Հորեղբայրս ինձ իր երեխաներից երբեք չի տարբերել: Վարդակից հայրենասեր էր, կարողանում էր ոգեւորել շրջապատի մարդկանց, նրա կողքին ամեն ինչ հնարավոր էր թվում: Երբ արդեն Որոտանի /Կուբաթի/ մեծ մասն Ադրբեջանի վերահսկողության տակ էր, Դավիթ Բեկի պաշտպանությունը կազմակերպելու համար սկսեցինք խրամակներ փորել, որոնք հետո ինչ-որ բանավոր համաձայնությամբ հանձնվեցին թշնամուն: Դավիթ Բեկ գյուղի մոտ մի բարձունք կա, որը վիճելի է: Հոկտեմբերի 29-ի առավոտյան հորեղբայրս իմանում է, որ այդ բարձունքի մոտ ադրբեջանցիներ կան: Ինքն առաջ է ընկնում, թե՛ կոխվել է լինում, որի ընթացքում էլ նահատակվում է հորեղբայրս:

Հայրս եմ, որ այդպիսի հորեղբայր եմ ունեցել, նրանով բոլորս ենք հպարտանում, նա այն օրինակներից է, որով պիտի դաստիարակվեն մեր երեխաները, մատաղ սերունդը պիտի իմանա, որ, ինչպես հորեղբայրս էր ասում՝ հայրենիքը կյանքից թանկ հասկացություն է:

Չնայած նրան, որ հորեղբորս աճյունը հուղարկավորված է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում, մենք գյուղի ընտանեկան գերեզմանատանը հուշաքար ենք տեղադրել, բանի որ հորեղբայրս պաշտում էր իր գյուղը...»:

Մարտիկի մասին գյուղացիներն ակնածանքով են խոսում, «Լավ հարեան էր, լավ մարդ, հարգալից ու հարգված, հայրենասեր, պատվախնդիր: Իրեն հարգող յուրաքանչյուր տղամարդ պիտի իր տունը պաշտպանելն իր պատիվն ու պարտքը համարի՝ Մարտիկի պես տղերքի հիշատակն աչքի առաջ ունենալով: Հի կարելի էր տնից փախչել վտանգի ժամանակ՝ հույս ունենալով, թե մեկ ուրիշը թո տունը բեզակից լավ կպաշտպանի, մեր գյուղից միայն մեկ-երկու հոգի չեն կանգնել Դա-

վիթ Բեկը պաշտպանելու: Դավիթեկցիները՝ մի բռունցք դարձած, թե՛ առաջնագծում, թե՛ թիկունքում ամեն ինչ արել են, որ թուրքը ԱյուՆիք չմտնի: Այս հողը սրբազործվել է մեր ընկերների ու որդիների այրուհով...»:

Մարտիկ Ավետիսյանի ընտանիքն այսօր էլ բնակվում է Դավիթ Բեկում, բանգի զավակները չեն կարող լքել այն, ինչն իրենց հայրը կյանքից թանկ էր համարում:

Մարտիկ Ավետիսյանը պարգևատրվել է «Կապան» եւ «Արիություն» մեդալներով՝ հետմահու:

»



Արչունց Արման. վտիտ ու աշխատասեր զինվորը, որ նահատակվեց Արցախում

Արչունց Արման Արտուշի. ծնվել է 2001 թ. հունվարի 26-ին Խնձորեսկ գյուղում: Սովորել է Որոտան գյուղի միջնակարգ դպրոցում: 2019 թ. գորակազմվել է բանակ: Ծառայել է Մարտակերտի Գանձասար գյուղում:

Արմանը 8 տարեկանում կորցրել է հորը: 11 տարեկանում ինքնակամ ստանձնել էր մորը ֆինանսապես օգնելու պարտավորությունը: Արմանի մայրը մեզ հետ խոսելիս մոլորում է որդու որբության, կյանքում տեսած դժվարությունների ու կրած զրկանքների համար. «Որդիս երբեք հեշտ չի ապրել, 11 տարեկանում դպրոց գնալուց առաջ՝ դեռ լույսը չբացված, գնում էր ձուկ որսալու, բռնած ձկները 300-400 դրամով վաճառում էր, գումարը դնում սեղանին, թե՛ հաց կանես երեխաների համար: Էլբան վտիտ էր, բարձրահասակ, բայց կիկար, գնում էր 1000-2000 դրամով ցեմենտ էր բեռնաւայփում, գումարն ինձ տալիս: Իր աշխատանքով բանակի բե՛ք արեց:

Իր տարեկիցները խմբով հավաքվում էին գրուցում, ասում էր՝ դու էլ գնա, միացիր նրանց, բայց երբեք չէր գնում, ընկերների հետ ժամանակ անցկացնելը ժամավաճառություն էր համարում:

Բանակում բոլորիս կարոտում էր, ասում էր՝ մամ, ինչ կլինի գնաք ցույց անեք, պահանջեք, որ մեզ արձակուրդ տան, աշխարհի չափ կարոտել եմ մեր գյուղը, շներին էր անգամ կարոտել:

Մանկություն չունեցավ, պատանեկությունն անցավ ծանր աշխատանքով, կյանք չտեսած զոհվեց տղաս:

Ծառայության ժամանակ էլ ինձ չի թողել, որ իր համար որեւէ բան անեմ, հրաշալի ծառայող էր: Բազմաթիվ պատվոգրեր է ստացել, նաեւ շնորհակալագրեր, «Բանակի գերազանցիկ» ու «Մարտիկ» մեդալներով է պարգևատրվել: Հրամանատարներն ասում են, որ բանակում էլ է աշխատասիրության օրինակ եղել:

Կարոտ կա, որ թե՛ներդ կտրում է, որ խեղդում է, որ ստիպում է բեզ անզորությունից եղունգները կրծել, հենց այդպիսի կարոտ եմ զգում...»:

Արմանի մասին համագյուղացիներն առանց արցունքների խոսել չեն կարողանում. «Տանջված երեխա էր: Հարգալից էր, օգնող, աշխատասեր, նվիրված: Մեծի պես աշխատում էր, մի բանի տղամարդուց ավելի պատասխանատու էր: Սիրված երեխա էր,

իսկապես, գյուղում բոլորը նրան սիրում էին իր համեստության, լսելու ունակության համար: Ափսոս, կյանքը չափազանց անարդար գտնվեց Արմանի նկատմամբ...»:

Հոկտեմբերի 18-ին Արմանը զանգահարել էր, ասել, որ ամեն ինչ լավ է: Ժամեր անց թշնամու անօդաչուի ռմբակոծումից զոհվել է, նրա հետ նույն խրամատում զոհվել է 8 զինվոր եւս: Իր համեստության ու աշխատասիրության շնորհիվ ձեռք էր բերել հավատարիմ ընկերներ, ովքեր իրենց կյանքը վտանգելով դուրս են բերել նրա անշնչացած մարմինն ու ժամեր անց հասցրել Գորիս:

Արման Արչունցի հուղարկավորությունը տեղի է ունեցել 2020 թ. հոկտեմբերի 21-ին՝ Որոտան գյուղի գերեզմանատանը:

Զետմահու պարգևատրվել է «Արիություն» մեդալով:

»



Բայան Արտաշես. փոքրամարմին ու մեծահոգի նահատակ Բռնակոթից

Բայան Արտաշես Ալբերտի. ծնվել է 1985 թ. հունվարի 5-ին Սիսիանի շրջանի Բռնակոթ գյուղում, սովորել է Բռնակոթի միջնակարգ դպրոցում: Դպրոցն ավարտելուց հետո գորակազմվել է: Պարտադիր զինվորական ծառայությունն անց է կացրել Արցախի Հանրապետության Մարտունի քաղաքի գորամասում:

Չորացրվելուց հետո Արտաշեսը պայմանագրային ծառայության է անցել Սիսիանի գորամասում:

Ամուսնացած էր՝ ունի երկու զավակ: Արտաշեսի մասին հայրը՝ Ալբերտն է պատմում. «Տղաս փոքրամարմին, կատակասեր ու անասիման բարի մարդ էր: Ընկերասեր էր, հարգալից, մեծ ու փոքր ճանաչող: Որդուս մասին որեւէ մեկն ինձ վատ բան չի ասել՝ երբեք:

Հրաշալի ընտանիք ուներ, լավ հարս ունեն, հրաշալի թոռներ, նրանք տղայիցս մնացած ամենայանպակն են: Արտաշեսս գնդացորդ էր, 13 տարվա ծառայության ընթացքում բազմաթիվ պատվոգրեր է ստացել:

Պատերազմի առաջին օրն են նրան Արցախ տարել: Մինչեւ հոկտեմբերի 2-ը զանգահարում էր, հոկտեմբերի 2-ից նրանից լուր չունեինք: Հոթ ամիս հետո՝ 2021 թ. ապրիլի 5-ին, մեզ տեղեկացրին, որ ԴՆԹ-ն համընկել է, հարսս գնացել ու հագուստից ճանաչել էր:

Ծանր է, իմ տղան կյանք չտեսած հեռացավ, հիմա էլ նրա երեխաները պիտի առանց հոր մեծանան: Փոքր թոռնիկս ամբողջ օրը երկնքին է նայում, ասում է՝ պապան այնտեղ է, պապան մեզ տեսնում է: Տառապանք է տեսել այդպեղծ հարսիդ ու թոռներիդ կարոտը...»:

Արտաշեսի ընկերներն ափսոսանքով են խոսում նրա մասին. «Արտաշը լավ տղա էր, մաքուր ու բարի հոգի ուներ: Երբեք ու ոչ մեկի օգնության խնդրանք չէր մերժում: Մարտական դիրքերում հազար ու մի դժվարություն էր լինում, տասը տարուց ավելի էր ծառայել, բայց ոչ մի անգամ չի բողբոջել դժվարություններից, նույնիսկ կատակում էր ու այդպես հաղթահարում բարդ իրավիճակները: Փոքրամարմին, բայց մեծահոգի մարդ էր: Նրա տեղը երեսում է, պատերազմից հետո ինչքան էլ ծիծաղում ենք, միևնույն է լիաթոք ուրախանալ չենք կարողանում, բանի որ նրանք՝ մեզ հետ դիրք պահած, նույն բլինդատում /գետնատնակ/ տարիներ ապրած տղերքը, մեզ հետ չեն...»:

Բայան Արտաշեսի հետ կապն ընդհատվել է 2020 թ. հոկտեմբերի 2-ին: Նրա աճյունը հողին է հանձնվել 2021 թ. ապրիլի 7-ին՝ Սիսիանի զինվորական պանթեոնում:

»

ԷՏԻ ՆՅՈՒԹԵՐԸ՝ ՏԻՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿՆԱՆ

Ավանդ, մեզ հետ չէ այլևս Ռեդիկ Յայրապետյանը

Յունվարի 8-ին վախճանվեց Ռեդիկ Գեորգի Յայրապետյանը...

Երկրային կյանքին հրաժեշտ տալուն նախորդել էր երկարատև հիվանդությունը՝ երբեմն-երբեմն տագնապալից դրսևորումներ ունենալով:

Բայց առողջական խթանված վիճակը, նույնիսկ վերահաս մահվան ստույգ գիտակցումը՝ նրան ոչ մի դեպքում չընկրկեցին եւ չիջեցրին մարդկային, բարոյական, բաղա-բացիական բարձր պատվանդանից, որի վրա կանգնել էր իր ապրած 74 տարիների ընթացքում՝ ազնիվ գործելակերպով, առողջ հոգեկերտվածքով ու կենսադիքով:


Ռեդիկ Յայրապետյանը վերջին չորս-հինգ տասնամյակի՝ գորիսյան մտավորականության ամենաերեւելի դեմքերից էր: Պատահական չէ, որ հանրապետության շատ-շատ մտավորականներ՝ Գորիս այցելելիս, կարելի էր համարում նրա հետ հանդիպելն ու մտքեր փոխանակելը:

Գերազանցությամբ էր ավարտել հայրենի ինստիտուտի գյուղի միջնակարգը, Երեւանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի քիմիայի ֆակուլտետը: Յետագայում, աշխատանքին զուգընթաց, կրթություն էր ստացել նաեւ Անդրկովկասի կոմերիտական եւ կուսակցական բարձրագույն դպրոցներում:

Եվ չնայած բնագիտական կրթությանը, օժտված էր ստեղծագործելու բնատուր կարողություններով, ինչի արդյունքը եղան բազմաթիվ արժեքավոր պատմվածքներ, ակնարկներ:

Քանիցս՝ մեր երկրի ու երկրամասի համար լարված ու անորոշ պահերին, լավում էր նրա սթափ, հավասարակշռված ու գոտեպնդող խոսքը:

Ռեդիկ Յայրապետյանը տեւական ժամանակ Գորիսի տարածաշրջանի երիտասարդության առաջնորդներից էր. 1971-79 թթ. կոմերիտության շրջկոմի բարտուղարն էր, երկրորդ բարտուղարը, ապա եւ առաջին բարտուղարը (1976-79թթ.):



Ռեդիկ Յայրապետյանը տվյալ էպիտայի այն կուսակցական գործիչներից էր, ովքեր պատասխանատու դիրքեր զբաղեցնելով կոմունիստական կուսակցության ապարտում ամբողջ երկրամասում մտածելակերպի եւ արժեքակարգի կրողն էին:

Դա հատկապես երեսն 1982-91 թթ., երբ կուսակցության Գորիսի շրջկոմի կազմակերպական բաժնի վարիչն էր, Գորիսի շրջխորհրդի՝ բանիցս ընտրված պատգամավորը:

Դա երեսն նաեւ Արցախի ազատագրության համար 1988-ին սկիզբ առած համազային զարթոնքի տարիներին, երբ սահմանամերձ գյուղերի ինքնապաշտպանությունը՝ սկզբնական փուլում, կազմակերպում էր կուսակցության շրջկոմը:

Ժամանակակիցներն առանձնապես հիշում են 1991-ի մայիսին նաեւ Գորիսի տարածքում իրականացված «Կոլոց» օպերացիան. նաեւ նրա անմիջական դերակատարությամբ ու խելամուռությամբ բազմաթիվ խաղաղ բնակիչներ (Յարթաշեն գյուղից) ազատվեցին պատանդելու ռեալ սպառնալիքից:

Ռեդիկ Յայրապետյանը մանկավարժությամբ

յան ոլորտի նվիրյալներից էր: Երբ 1968 թ. գերազանցությամբ ավարտեց բարձրագույն ուսումնական հաստատությունը, նրան առաջարկեցին մնալ բուհում, բայց գերադասեց վերադառնալ հայրենի ինստիտուտ, որտեղ ծնվել էր 1948-ի հոկտեմբերի 23-ին, որտեղ միջնակարգ դպրոցն էր ավարտել, որտեղ էլ ուսուցչություն արեց մինչեւ բանակ գորակոչվելը (1970-1971 թթ. ծառայել է Ոստրիսի բաղադրում): 2005-ից հետո էլ՝ մոտ տասը տարի, քիմիա եւ կենսաբանություն էր դասավանդում Քաջաթաղի Ղազարապատ, Գորիսի Սվարանց եւ Որոտան գյուղերում:

Նրա մանկավարժական գիտելիքները, փորձն ու հմտությունը բանիցս մատուցույց են արվել՝ իբրեւ ընդորինակման արժանի:

Մինչ այդ՝ 1991-ից սկսած, զբաղվեց ձեռներեցությամբ, բայց ժամանակի սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական վայրիվերումները թույլ չտվեցին հաջողություններ ունենալ, ինչի համար էլ իր գիտելիքներն ու կարողություններն այլ ոլորտում օգտագործեց:

Ռեդիկ Յայրապետյանը հրաշալի ընտանիք էր ստեղծել...

Իր խաթարված առողջության եւ բժիշկների չղաղարող հսկողության պայմաններում երեք-չորս տարի շարունակ, անձամբ էր ինստիտուտի հիվանդանոցում կնոջը (զավակները դրսում էին)՝ այդ կերպ զոհաբերելով իրեն՝ հանուն կյանքի ընկերոջ՝ Շուշանիկ Մինասյանի առողջության, որի հետ ամուսնացել էր 1975-ին՝ ունենալով երեք զավակ:

Այդ ամենի, նաեւ ընկերների, բարեկամների ու համաբաղաբացիների հետ ունեցած ջերմ եւ անկեղծ հարաբերությունների համար էլ նա վայելում էր Գորիսի հասարակության սերն ու հարգանքը:

Ահա այսպիսին էր Ռեդիկ Յայրապետյանը, ում մահվան բոթը լսեցինք ցավով ու ափսոսանքով:

Յիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի:



Էլեկտրաէներգիան կրթական 4.7 դրամով դրամով

Յայտատուում էլեկտրաէներգիայի միջին կշռված սակագինը 2022 թվականի փետրվարի 1-ից կավելանա 4.7 դրամով. սոցիալապես անապահով ընտանիքների համար, սակայն, գործող սակագները կպահպանվեն: «Արմենպրեմ»-ի հաղորդմամբ՝ Յանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը դեկտեմբերի 29-ի նիստում ընդունել է համապատասխան որոշումը:

Սակագների փոփոխության առաջարկն արել էր ՀԾԿՀ-ն: Այսպիսով՝ սոցիալապես անապահովների համար, որոնք կազմում են բնակիչ-բաժանորդների 11 տոկոսը, սակագները կմնան անփոփոխ, իսկ ամսական մինչև 200 կՎտժ սպառում ունեցող բնակիչների համար, որոնք կազմում են բնակիչ-բաժանորդների 55 տոկոսը, սակագինը կավելանա 1.5 դրամ/կՎտժ-ով: Իսկ բնակիչ-բաժանորդների 25 տոկոսը կազմող՝ ամսական 201-400 կՎտժ սպառում ունեցողների համար սակագները կավելանան 3.5 դրամ/կՎտժ-ով, իսկ մնացած սպառողների համար առաջարկվում է սակագինն ավելացնել 5.5 դրամ/կՎտժ-ով:

Այսպիսով՝ սոցիալապես անապահով ընտանիքների համար ցերեկային և գիշերային սակագները կշարունակեն մնալ համապատասխանաբար 29.99 դրամ և 19.99 դրամ: Ամսական մինչև 200 կՎտժ սպառում ունեցող բնակիչների համար ցերեկային սակագինը գործող 44.98 դրամի փոխարեն կդառնա 46.48 դրամ, գիշերայինը՝ 34.98 դրամի փոխարեն՝ 36.48 դրամ: Ամսական 201-400 կՎտժ սպառում ունեցող բնակիչների համար ցերեկային սակագինը գործող 44.98 դրամի փոխարեն կդառնա 48.48 դրամ, գիշերային սակագինը գործող 34.98 դրամի փոխարեն՝ 38.48 դրամ: Իսկ 400 կՎտժ-ից ավել սպառում ունեցողների համար ցերեկային սակագինը գործող 47.98 դրամի փոխարեն կդառնա 53.48 դրամ, գիշերային սակագինը՝ գործող 37.98 դրամի փոխարեն՝ 43.48 դրամ:

Պատերազմում կյուրթական վնաս կրածների դիմումները կընդունեն փետրվարի 1-ից

Ի գիտություն Արցախի Յանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 19-ի N 336-Ա որոշման շահառուներին:

Սույն թվականի հունվարի 10-ից ժամանակավորապես դադարեցվում է 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Յանրապետության դեմ սանձազերծված պատերազմի հետևանքով կյուրթական վնաս կրած ֆիզիկական և իրավաբանական անձանց պետական ֆինանսական աջակցության միջոցառման ծրագիրն իրականացնող պետական հանձնաժողովի աշխատանքային խմբի դիմումների ընդունման գործընթացը՝ հավաքված դիմումների ուսումնասիրման և թվայնացման նպատակով:

Ինչպես տեղեկացրին ԱՀ Կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեից, վերոնշյալ աշխատանքային խումբը կվերսկսի իր աշխատանքները սույն թվականի փետրվարի 1-ից:

10.01.2022


ԿՈՐՆԵ Է Սամվել Շամխալի Յակոբջանյանի (գ. Կոռնիձոր) 1985 թվականի արտադրության T-150 Կ մակնիշի տրակտորի պետհամարակիցը (4161 SL) և տեխանձնագիրը (P-001379): Յամարել անվավեր:

Մեր անկրկնելի ընկեր Եսայանը՝ հայոց լեզվի և գրականության ուսուցչուհին

Յունվարի 10-ին երկրային կյանքին հրաժեշտ տվեց հայոց լեզվի և գրականության մեծահամբավ ուսուցչուհի, Գորիսի տարածաշրջանի մտավորականության երևելի ներկայացուցիչ Ամայա Եսայանը:

Բազմամյա անկրկնելի մանկավարժ Ամայա Եսայանը ծնվել է 1939թ. Միսիսի Թասիկ գյուղում: Ավարտելով գյուղի յոթամյա դպրոցը՝ գերազանց առաջադիմությամբ, ուսումը շարունակել է Գորիսի մանկավարժական ուսումնարանում: Մայրն առանց աղջկա էր գնացել թղթերը հանձնելու, և նրան մերժեցին՝ ասելով՝ մանկավարժ դառնում են անթերիները: Եվ շուտով բարակիրան, բարձրահասակ, ծով աչքերով գեղեցիկուհին գրավում է բոլոր դասախոսների սրտերը՝ իր ուշիմությամբ, պատասխանատվությամբ և պարտաճանաչությամբ: Այնուհետ սովորել է Երեւանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետում: Բոլոր դժվարությունները հաղթահարելի են եղել նրա համար: Եվ այդ պատճառով եղել է լավ հարս, լավ կին, լավ մայր, լավ ուսուցիչ: Նրա սաները հազարներ են, և չկա մեկը, որ չսիրեր խստաբարո, պահաջկոտ, ժպտերես, կյանքով լեցուն ուսուցչուհուն: Բոլորը կարողում էին ու անգիր անում ուսուցչուհուն հանձնարարած բանաստեղծությունները, ասույթները և կյանքում առաջնորդվում նրա իմաստու խրատներով:

Նրա խոսքերով՝ դպրոցը մշտապես եղել է մայր ու իբրև տաճար, որտեղ պետք է մոտենալ երկրորդականությամբ և մեծ պատասխանատվությամբ, բանի որ մանկավարժը գործ ունի աշակերտի հոգու և մտքի, նրա զգացմունքների հետ: Մանկավարժի կողմը, իրոք, այնքան բարձր է հնչում, որ պարզապես պետք



է կարողանալ մնալ այդ բարձունքի վրա: Այդ կողմը նրա համար, նախ և առաջ, հպարտություն էր, մեծ պատասխանատվություն և պարզաբացու, ժողովրդի առջև: Մանկավարժն իրավունք չունի հանգիստ բնել, եթե իր աշակերտն այդ օրը դասը լավ չի յուրացրել կամ թերացել է, կամ էլ որևէ զանցանք է թույլ տվել: Միայն դասը մատուցելով չէ, որ մանկավարժը կարող է լավ մանկավարժ կոչվել: Նա պետք է լինի միաժամանակ և՛ դաստիարակության, և՛ բարոյական արժեքների գիտակից համադրողը:

Ահա այդպիսի սկզբունքներով էր տարիներ շարունակ նա առաջնորդվում...

Ամուսնացել է Յարթիս գյուղում, ունի հինգ զավակ, որոնցից երեքը նույնպես ընտրել են մանկավարժի դժվար եւ պատվավոր ուղին:

Մանկավարժական գործունեությունը սկսել է Կապանի շրջանի Կաթնառատ գյուղում, ապա տեղափոխվել ամուսնու հայրենի գյուղ և մնացել գյուղում, որտեղ բոլորի համար ընկեր Եսայան էր:

Շուրջ հիսուն տարի Ամայա Եսայանն աշխատել է Յարթիսի Յամբետ Մինասյանի անվան միջնակարգ դպրոցում՝ հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի: Արժանացել է պատվոգրերի, շնորհակալագրերի, սակայն երբեք չի կարևորել կոչումները, նրա համար, ըստ եզրանքի, ամենաբարձր կոչումն իր սաների սերն ու հարգանքն է եղել:


«Լավ ուսուցիչ լինելու համար հարկավոր է սիրել այն, ինչ դասավանդում ես, եւ սիրել նրան, ում դասավանդում ես», - սա է երկրամյա ուսուցչուհուն՝ փորձով ամրագրված կշանաբանը:

Մարդու մեջ գնահատում էր բարոյությունը և պնդում, որ կրթությունն իր մեջ պետք է անպայման ներառի բարին, որովհետեւ դրանից են կախված կրթության հաջողությունն ու արդյունավետությունը:

Յեյ ազահ մարդ, հեյ անհոգ մարդ, միտքդ երկար, կյանքդ կարճ, Քանի բանին անցան թեզ պես, Քեզկից առաջ, թո առաջ. Ինչ են տարել նորանք կյանքից, թե ինչ տանես դու թեզ հետ, Խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրվան եւ ճամփեր:

Յնչում է մեր ունկերում սիրելի ուսուցչուհու ձայնը՝ Ամենայն հայոց բանաստեղծի խոսքերի արտաբերմամբ, և հետ ենք նայում ու տեսնում, որ նա իր «երկու օրվա» ճանապարհն անցել է խաղաղ և ուրախ...

Ճանապարհ, որ կյանքի միջով է անցնում



Ե միախոյուն է հարազատների, համագյուղացիների, ընկերների ու գործընկերների, իր գյուղի, ապա նաև քաղաքի ու Հայաստան աշխարհի հետ: Գրքի ենթավերնագրերն էլ մի-մի սրտառուչ պատմություն են՝ «Որտեղից է սկսվում հայրենիքը», «Տոնածառի ճյուղերը», «Մորս վերջին խնդրանքը», «Չրոպց գավազների հետ», «Գյուղական գույներ», «Իմ «զենեղանակ» պատմությունը» և այլն: Դրանցից յուրաքանչյուրն ինքնատիպ պատմություն լինելուց զատ, կյանքի դաս է, մարդկային բարոյականության նկարագրի մի նրբերանգ՝ իր լեզվածական բնութագրով, իր պատկերացմամբ ու վերաբերմունքով:

Գրքում տեղ են գտել Կոլոդյա Աբրահամյանի մասին բարձրաստիճան գինվորականների, գործընկերների, Սյունիքի մարզի և Կապանի շրջանի նախկին ղեկավարների (Սուրեն Խաչատրյան և Ռուսլան Դոնյան) կարծիքներ, գնահատանքի խոսքեր, հուշեր, տպավորություններ՝ նրա հետ ունեցած անչլություններից: Դրանք, մասնավորապես, լույս են սփռում Կ. Աբրահամյանի՝ Կապանի և մյուս տարածաշրջանների բնակավայրերի կառուցապատման, Արցախյան գոյամարտի և հայոց բանակաշինության հետ առնչությունների վրա: Գիրքն ամբողջանում է նրանում գետնից հիմն ու նոր ժամանակների բազում լուսանկարներով և լույս է տեսել պոլիգրաֆիկական բարձր մակարդակով, իսկ ընտրված պատումային թեթև ոճը թույլ է տալիս այն ընթերցել մեկ շնչով:

Սա Կոլոդյա Աբրահամյանի երկրորդ գիրքն է, առաջինը կրում էր «Քաջարան. Կերին ձորի երևելի մարդիկ» վերնագիրը, որ ըստ ամենայնի հարգանքի տուրք է իր ծննդավայրի մարդկանց հիշատակին: Այս երկու գրքերում էլ այն զաղափարն է մարմնավորված, որ հայրենիքը ճանաչելու համար նախ պիտի իմանաս նախնիներիդ պատմությունը:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Յայրենաճանաչությանը, հայրենի եզերքին նվիրված գրքերի շարքը համալրվեց ևս մեկով: Ընթերցողին է հասել Կոլոդյա Աբրահամյանի «Ճանապարհ կյանքի միջով» գիրքը: Վերնագիրը նաև մի հավելում ունի՝ հուշագրական կենսապատում, որն առավելագույնս բնորոշում է գրքի ուղղվածությունը:

Դեկտեմբերի 26-ին՝ Կ. Աբրահամյանի մահվան տարելիցին նվիրված արարողությունից հետո, հանրությանը ներկայացվեց նրա երկրորդ գիրքը, որի մասին խոսք ասաց գրքի խմբագիր, Հայաստանի հանքագործների և մետալուրգների միության տնօրեն, «Հանքագործ և մետալուրգ» հանդեսի նախկին գլխավոր խմբագիր Կոլոդյա Կիրակոսյանը: Բանախոսն իր խոսքում, մասնավորապես, այն միտքը հայտնեց, որ գիրքը մի կուռ ամբողջականություն է, պատմություն մի մարդու մասին, ով հազար թելերով կապված

Հպատվաստված կամ չթեստավորված անձանց մուտքը կսահմանափակվի որոշ վայրեր. հրապարակվել է նախարարի հրամանը

Հրապարակվել է ՀՀ առողջապահության նախարարի թիվ 02-Ն հրամանը՝ ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի թիվ 17-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

Հրամանի համաձայն՝ հյուրանոցների, մարզադահլիճների, համախորդները, գործարանների, թանգարանների այցելուները, թատերահամերգային, կինոյի և այլ մշակութային գործունեություն իրականացնող կազմակերպությունների հանդիսատեսները տվյալ վայր մուտք գործելիս պետք է ներկայացնեն կամ թեստավորման, կամ պատվաստման սերտիֆիկատ՝ բջջային հավելվածի արագ արձագանքման ծածկագրի (QR կոդ) միջոցով կամ բջջային հավելվածից արտածված թղթային տարբերակով:

Տվյալ պահանջը չի վերաբերում հղիներին, բացարձակ հակացուցում ունեցողներին և նախկինում կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) հիվանդացածներին, որոնք ունեն մինչև 90 օրվա վաղեմության ՊՇՌ հետազոտության դրական արդյունք:

Հրամանում նշվում է՝ այցելուները (բացառությամբ մինչև 18 տարեկան անձանց՝ անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում, հղիների՝ հղիության մասին բժշկական փաստաթուղթ ներկայացնելու դեպքում, փաստագրված բացարձակ հակացուցում ունեցողների բացառական հակացուցման մասին բժշկական փաստաթուղթ ներկայացնելու

դեպքում, ինչպես նաև նախկինում կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) հիվանդացածների՝ ՊՇՌ հետազոտության առաջին դրական արդյունքից հաշված 90 օրվա ընթացքում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման ՊՇՌ հետազոտության առաջին դրական արդյունքը հավաստող էլեկտրոնային առողջապահության միասնական տեղեկատվական ԱՐՄԵԴ համակարգից արտածված սերտիֆիկատ ներկայացնելու դեպքում) մուտք են գործում միայն առավելագույնը 72 ժամ վաղեմության սերտիֆիկատի, կամ Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից նախատրակավորված կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) հարուցիչ հակածնի հայտնաբերման արագ ախտորոշիչ թեստի 24 ժամյա վաղեմության բացասական արդյունքը հավաստող տեղեկանքի՝ արտածված էլեկտրոնային առողջապահության միասնական տեղեկատվական ԱՐՄԵԴ համակարգից՝ համաձայն Առողջապահության նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 4379-Ն հրամանի պահանջների, կամ պատվաստման սերտիֆիկատի առկայությամբ, բջջային հավելվածի արագ արձագանքման ծածկագրի (QR կոդ) միջոցով կամ բջջային հավելվածից արտածված թղթային տարբերակով:

Հրամանը ուժի մեջ է մտել հունվարի 8-ին, նշված սահմանափակումները սկսելու են գործել հունվարի 23-ից:

10.01.2022

«Միսս Հայաստան 2021»-ը է ճանաչվել գործիքի Սոնա Դավթյանը



Երեանում կայացել է «Միսս Հայաստան 2021» ազգային գեղեցկության մրցույթը, որի հաղթողը դարձավ 20-ամյա Սոնա Դավթյանը: Հաղթողն ընտրվել է նախապես հայտարարված բլեյզերության եւ ժյուրիի գնահատականի արդյունքում: Սոնա Դավթյանը մրցույթում ներկայացնում էր Սյունիքի մարզը: Նա ծնունդով Գորիսից է, սովորում է Երեւանի պետական համալսարանի եվրոպական լեզուների եւ հաղորդակցության ֆակուլտետի իտալերենի եւ անգլերենի բաժնում: Այս տարի մրցույթին մասնակցում էր 24 աղջիկ: «Միսս Հայաստան» մրցույթը պետք է տեղի ունենար դեռեւս 2020 թ-ին, սակայն կորոնավիրուսով ու պատերազմով պայմանավորված՝ այն հետաձգվեց: //



«Մեծ հաղթանակի դեմքեր»

Կապանի համայնքապետարանի արվեստի թանգարանում դեկտեմբերի 25-ին բացվեց «Մեծ հաղթանակի դեմքեր» լուսանկարչական ցուցահանդեսը: Լուսանկարիչ Տարա Մնացականյանն անմահացրել է Մեծ հայրենականին մասնակցած 110 վեներանի դիմանկարներ, ովքեր կենդանի են: Լուսանկարներից նայում են երկրորդ աշխարհամարտի մասնակիցները, որը թախծոտ, որը հպարտ դեմքով: Երանցից վեցը Սյունիքի մարզից են: Ցուցահանդեսի բացմանը մասնակցում էին Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանը, Հայաստանում Ռուսաստանի Դաշնության դեսպանության, ՌԴ արտգործնախարարության Երևանում գտնվող «Ռուսական տան» ներկայացուցիչներ, Մեդրու սահմանապահ ջոկատի զինվորականներ, հյուրեր:

դեսի բացմանը բարեմաղթանքի խոսք ասացին թանգարանի տնօրեն Բորիկ Միևայանը, Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանը, «Ռուսական տան» տնօրեն Վաղիմ Տեֆիլովը, մշակութային և հումանիտար ծրագրերի ղեկավար Արդուանիկ Արզումանյանը, Մեդրու սահմանապահ ջոկատի հրամանատարի տեղակալ Վասիլի Մուկաբեևովը, ովքեր իրենց խոսքում արժևորեցին հայ զինվորների մասնակցությունը երկրորդ աշխարհամարտին: Ցուցահանդեսի մասնակիցների համար հաճելի անակնկալ էր այն պահը, երբ նրանց միացավ պատերազմի վետերան, 99-ամյա Արշալույս Թաղևոսյանը (լուսանկարում), ում հետ շատերն էին ուզում լուսանկարվել՝ պատից կախված նրա դիմանկարի ֆոնին:

Ցուցահանդեսը նախ ներկայացվել է մայրաքաղաքում, երկրորդ հանգրվանը Կապան էր: Մարզկենտրոնի բնակչությունը մեկ ամիս հնարավորություն կունենա ծանոթանալու ցուցահանդեսին:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Կապանի արվեստի պետական բոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ ՏՆՕՐԵՆԻ ԹՄՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՐԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1569-Ն որոշմամբ հաստատված՝ նախկին մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության կարգի 4-րդ կետի համաձայն՝ «Կապանի արվեստի պետական բոլեջ» ՊՈԱԿ-ի կազմում մարմինը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

- 1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝ 1) ՀՀ բաղաբացիությունը, 2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):
- 2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդ ներկայացնում է՝

- 1) դիմում՝ կառավարման խորհրդի նախագահի անունով,
 - 2) ՀՀ քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը,
 - 3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը,
 - 4) տվյալ հաստատության 5 տարվա զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով՝ սույն կարգի 26-րդ կետի պահանջներին համապատասխան,
 - 5) ինքնակենսագրություն:
- Փաստաթղթերի պատճենները խորհրդի նախագահին կամ քարտուղարին առձեռն ներկայացնելու դեպքում պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են «Կապանի արվեստի պետական բոլեջ» ՊՈԱԿ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Ռ. Մեյիթյան 2, 2022 թ. հունվարի 11-ից մինչև փետրվարի 1-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև ժամը 18:00, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրընթաց սահմանված ոչ աշխատանքային տոնակալ և հիշատակի օրերից: Մրցույթը տեղի կունենա 2022 թ. փետրվարի 10-ին՝ ժամը 15:00-ին, «Կապանի արվեստի պետական բոլեջ» ՊՈԱԿ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Ռ. Մեյիթյան 2-ում: Տեղեկությունների համար դիմել (+374 285) 2 48 91, (+374 93) 7297: //

Այոնյաց երկիր
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԴԱՏԱՍԽԱՆԱՏ-ՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏԳՍԳՐՎՈՒՄ Ե 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
☎ (+374 91) 45 90 47
☎ (+374 77) 45 90 47
✉ syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Կրթությունը ներկայացնելու մեթոդագիր վիճակում:
«ԳՐՎԱԸԴ» - ԾԱՆՈՒՑՈՒՄ բաժնում
տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
Հրումը «Այոնյաց երկիր» պարտադիր է: Թշնամի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաբանակը՝ 1200, գինը՝ 200 դրամ: Ստորագրված է տպագրության 11.01.2022թ.: